



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքեր»  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

սրառման և տուրածի կողմէց ցույց ցունելած ձևով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ կողմէց ստեղծելու համար նոր

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


Hawkins  
Judd & H.




1452

891.99-1(09)

f 92 f pmmuy, J.  
Zug fuhmmpfgru  
pymke





ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ ԳՐԱՆՆ

ՀԱՅՈՎՈՑ

# ԺԱՄԱԳԻՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԱՅՑ Ա. ԵԿԵՂԵՑԻՈՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ


A-18906




ՏՊԱՐԱՆ «ՊԱՅՔԱՐ»Ի

Պուրոն, Մէս.

1923





281-6  
2 - 20

341

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ  
(Ա. ՏՊԱԳՐՈՒԹԵՆՔՆ)

Կարեւոր պահանջի մը կարելիութեան սահմանին մէջ զոհացում տալու արդար գիտակցութեամբ կը ձեռնարկեմ սոյն երատարակութեան:

Համառոտ եւ ամփոփ ԺԱՄԱԳԻՐՔ մըն է ասիկա, ուր եկեղեցաւք հայեր պիտի գտնեն, սովորական ժամասցութեան կարեւորագոյն մասերէն զատ, նաև՝ ՊԱՏԱՐԱԳԻ, ԾՆՆԴԵԱՆ ու ՄԿՐՏՈՒԹԵԱՆ, ԱԽԱԳ ՇԱԲԹՈՒ եւ ԶԱՏԿԻ, ինչպէս նաև Մեծ Պահոց ԱՐԵՒԱԳԱԼԻ երգերը, եւայլն:

Հրատարակիչ  
ՅԱՐ. Գ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1 Յուլիս 1923  
Պուրոն, Մէս.

A-  
18906





## ՀՐԱԺԱՐՈՒՄՆ

Հրաժարիմք ի սատանայէ եւ յամենայն խարէութենէ նորա . ի պատրանաց նորա . ի խորհրդոց նորա . ի գնացից նորա . ի չար կամաց նորա . ի չար հրեշտակաց նորա . ի չար պաշտօնէից նորա . ի չար կամարաբաց նորա . եւ յամենայն չար զօրութենէ նորա հրաժարելով հրաժարիմք :

Զայս երիցս կրկնեա' երես ի յարեւմուտս եւ ձեռս ի կոր ունենալով՝ եւ ապա դառնալ յարեւելս եւ սկսանիլ զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ , բացագլուխ եւ ձեռնամած կերպիւ եւ ասէ .

Խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած՝ անեղ , անծին եւ անսկիզբն . այլ եւ ծնող Որդւոյ եւ բղխող Հոգւոյն որրոյ : Հաւատամք զբանն Աստուած՝ անեղ ծնեալ՝ եւ սկսեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս : Ոչ յետոյ եւ ոչ կրտսեր . այլ որքան Հայրն Հայր՝ ընդ նմին եւ Որդին Որդի : Հաւատամք զսուրբ Հոգին՝ անեղ անժամանակ . ոչ ծնեալ՝ այլ բղխեալ ի Հօրէ էակից Հօր եւ փառակից Որդւոյ : Հաւատամք զԵրրորդութիւնն սուրբ մի բնութիւն , մի Աստուածութիւն . ոչ երեք աստուածք , այլ՝ մի Աստուած . մի կամք . մի թագաւորութիւն , մի իշխանութիւն , արարիչ երեւելեաց եւ աներեւութից : Հաւատամք յեկեղեցի սուրբ , զթողութիւն մեղաց հաղորդութեամք սրբոյ : Հաւատամք զմինն յերից անձանց զբանն Աստուած՝ ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս . ի ժամանակի իջեալ յԱստուածածին կոյսն Մարիամ . առեալ յարենէ նորա՝ միաւորեաց ընդ իւրում Աս-

տուածութեանն . իննամսեայ ժուժկալեալ յարգանդի ա-  
նարատ կուսին . եւ եղեւ Աստուածն կատարեալ՝ մարդ  
կատարեալ . հոգւով եւ մտօք եւ մարմնով մի անձն , մի  
դէմ եւ միաւորեալ մի բնութիւն : Աստուածն մարդացեալ  
առանց փոփոխման եւ առանց այլայլութեան . անսերմն  
յղութիւն եւ անապական ծնունդ , որպէս ոչ է սկիզբն  
Աստուածութեան նորա <sup>նորա</sup> եւ ոչ վախճան մարդկութեան  
նորա : (Զի Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր՝ նոյն եւ յա-  
ւիտեան) : Հաւատամք զԾէրն մեր Յիսուս Քրիստոս շըրջ-  
եալ ի վերայ երկրի : Յետ երեսուն ամաց եկեալ ի մկրտու-  
թիւն : Հայր ի վերուստ վկայեալ՝ Դա է որդի իմ սիրելի  
եւ Հոգին սուրբ աղաւնակերպ իջեալ ի վերայ նորա : Փորձ-  
եալ ի սատանայէ եւ յաղթեալ նմա : Քարոզեալ մարդկան  
զփրկութիւն : Աշխատեալ մարմնով , վաստակեալ , քաղց-  
եալ եւ ծարաւեալ : Յետոյ եկեալ կամաւ ի չարչարանս ,  
խաչեալ եւ մեռեալ մարմնով . եւ կենդանի՝ Աստուածու-  
թեամբն : Մարմինն եղեալ ի գերեզմանի՝ միաւորեալ Աս-  
տուածութեամբն , եւ Հոգւովն իջեալ ի դժոխս՝ անբաժա-  
նելի Աստուածութեամբն : Քարոզեալ հոգւոցն աւերեալ  
զդժոխս՝ եւ ազատեալ զհոգիսն : Յետ երից աւուրց յա-  
րուցեալ ի մեռելոց եւ երեւեալ աշակերտացն : Հաւատամք  
զԾէրն մեր Յիսուս Քրիստոս նովին մարմնովն համբարձ-  
եալ յերկիմս եւ նստեալ ընդ աջմէ Հօր : Այլ եւ զալոց է  
նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ  
զմեռեալս : Որ եւ յարութիւն ամենայն մարդկան : Հաւա-  
տամք եւ զհատուցումն զործոց , արդարոցն կեանք յաւի-  
տենական , եւ մեղաւորացն տանջանք յաւիտենական :

Բաց զգիրս զայս եւ ընթերցջիր տռագի խոստովանահօր քն, երբ երթիցես խոստովանիլ զմեղս :

## Զ Ն Զ ՈՒՄ Ն

Մեղայ ամենասուրբ Երրորդութեանն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ : Մեղուցեալ եմ Աստուծոյ : Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ սրբուհւոյ Աստուածածնին եւ առաջի քոյ Հայր սուրբ, զամենայն մեղս զոր գործեալ եմ : Քանզի մեղայ խորհրդով բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղայ Աստուծոյ : Մեղայ հոգւովս եւ զօրութեամբ սորա . մտօքս եւ շարժմամբ սորա, մարմնովս և զգայութեամբ սորա : Մեղայ զօրութեամբ հոգւոյս . խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդդնութեամբ եւ երկչոտութեամբ, շուայլութեամբ եւ ժլատութեամբ, զեղիսութեամբ եւ անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահաւանութեամբ, յուսահաւութեամբ . խեթիւ, մախանօք, յաչախանօք, թուլութեամբ, պոռնկական խորհրդով, արուական + իդական, անասնական, գրաստական, գազանական, ի գիշերի եւ ի տուընջեան երազական գիճութեամբ եւ յանըրջական զարշ աղտեղութեամբ՝ մեղայ : Մեղայ ցանկութեամբ մարմնոյս հեշտութեամբ՝ պղերգութեամբ՝ յօրանջմամբ քնոյ՝ շարժութեամբ մարմնոյս եւ զազրագործութեամբ ի պէս պէս ախտս, հեշտութեամբ լսելեացս, արատութեամբ աշացս, ցանկութեամբ սրտիս, ի գութեամբ ոնզացս, պազշոտութեամբ բերանոյս, անժուժկալութեամբ, շուայտութեամբ եւ արբեցութեամբ՝ մեղայ Աստուծոյ : Մեղայ չարաբանութեամբ լեզուիս,

ստախօսութեամբ . սուստ երդմամբ , երդմնազանցութեամբ , հակառակութեամբ , վիճարանութեամբ . բանսարկութեամբ , չոգմոգութեամբ , քսու , դատարկարանութեամբ եւ ծաղու . զրախօսութեամբ , հերձախօսութեամբ եւ անիծարանութեամբ , տրտնջելով , դժգոհելով , բամբասելով եւ հայշոյելով . մեղայ : Մեղայ գողութեամբ ձեռացս , ազահելով , զրկելով , հարկանելով , ըսպանանելով եւ ընդ դարշս ածելով , մեղայ Աստուծոյ : Մեղայ ամենայն յօղուածովք շինուածոյս եւ ամենայն անդամօք մարմնոյս . Եօթնեակ զգայարանօքս եւ վեցեկի շարժմամբս . վենամբարձ ոտնահարութեամբ եւ վայրաքարչ մեղկութեամբ , յաջ եւ յահեակ խոտորելով . առաջնոցն մեղանչելով , եւ վերջնոցն չար նշաւակ գոլով՝ մեղայ Աստուծոյ : Այլ եւ մեղայ Եօթնիցս յանցանօք մահացու մեղօք . Հպարտութեամբ եւ մասամբ նորին . Նախանձու եւ մասամբ նորին . Բարկութեամբ եւ մասամբ նորին . Ծուլութեամբ եւ մասամբ նորին . Ազահութեամբ եւ մասամբ նորին . Որկրամոլութեամբ եւ մասամբ նորին . Բղջախոհութեամբ եւ մասամբ նորին՝ մեղայ Աստուծոյ : Այլ եւ մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ , յանձնառելեացն եւ հրաժարելեացն . զի ոչ զյանձնառականս կատարեցի եւ ոչ ի հրաժարելեացն հեռացայ : Զօրէնս առփ՝ եւ յօրինացն յեղգացայ . ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ եւ գործովս անարժան դտայ . Գիտելով զչարն՝ կամաւ կորացայ . եւ ի բարեաց գործոց ես ինձէն հեռացայ . Վա՛յ ինձ , վա՛յ ինձ , վա՛յ ինձ : Զո՞րն ասեմ , կամ զո՞րն խոստովանիմ . զի անթիւ են յանցանք իմ . անասելի են անօրէնութիւնք իմ . աններելի են ցաւք իմ . եւ անբժշկելի են վէրք իմ . մեղայ Աստուծոյ :

Հայր սուրբ՝ զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան՝ եւ

բարեխօս առ միածին Որդի Աստուծոյ, զի իշխանութեամբ որ տուեալ է քեզ՝ արձակեսցես զիս ի կապից մեղաց իմոց, աղաչեմ զքեզ:

## ԱՐՁԱԿՈՒՄՆ

Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած, եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց. խոստովանացելոցդ եւ մոռացելոցդ: Եւ ես կարգաւո քահանայական իշխանութեամբ եւ հրամանաւն Աստուածային թէ (Զոր արձակիցէ յերկրի, եղիցի արձակեալ յերկինս) Նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց, ի խորհրդոց ի բանից եւ ի գործոց յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Եւ գարձեալ տամ զքեզ ի խորհուրդս սուրբ եկեղեցւոյ. զի զոր ինչ գործիցես բարիս, եղիցի քեզ ի բարեգործութիւն եւ ի փառա հանդերձեալ կենառն. ամէն:

## ԱՌԱԻՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ



Քհեյ. Օրհնեալ Տէր մեր Յս. Քս. ամէն:

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Սրկ. Օրհնեալ է Աստուած:

Քհեյ. Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Սրկ. Օրհնեալ է Աստուած:

Քհեյ. Օրհնեալ համագոյ եւ միասնական անբաժանելի Սուրբ Երրորդութիւնն՝ Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ, այժմ:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան:

Քհեյ. Օրհնութիւն եւ փառք:

Դպ. Տէ՛ր, զի բազում եղեն նեղիչք իմ, եւ բազումք յարեան ի վերայ իմ:

Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չի՛ք փըրկութիւն սորա առ Աստուած իւր:

Այլ դու Տէ՛ր՝ օգնական իմ ես, փառք իմ եւ բարձրացուցիչ գլխոյ իմոյ:

Զայնիւ իմով ես առ Տէ՛ր կարդացի եւ լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ:

Ես ննջեցի եւ ի քուն եղէ, զարթեայ եւ Տէ՛ր ընդունելի իմ է:

Ո՛չ երկեայց ես ի բիւրաւոր զօրաց նոցա, ոյք շուրջանակի պատեալ պաշարեալ պահէին զիս:

Արի՛ Տէ՛ր եւ փրկեա՛ զիս, Աստուած իմ, զի դու հարեր զամենեսեան, ոյք էին ընդ իս թշնամութեամբ, ի տարապարտուց, եւ զատամունս մեղաւորաց փշրեսցես:

Տեառնդ էփրկութիւն՝ ի վերայ ժողովրդեան քո, օրհնութիւն քո:

Տէր Աստուած փրկութեան իմոյ ի տուէ կարդացի եւ գիշերի առաջի քո:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս իմ:

Զի լցաւ չարչարանօք անձն իմ եւ կեանք իմ ի դժոխս մերձեցան, եւ համարեցայ ես ընդ այնոսիկ որք իջանեն ի գուր:

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի եւ ի մեռեալս ազատ:

Որպէս զվիրաւորս որք ննջեն ի գերեզմանս:

Զորս դու ո՛չ յիշեցիր, նոքա ի ձեռանէ քում-մէ մերժեցան:

Եղին զիս ի գրի ներքումն ի խաւարի եւ ի ստուերս մահու:

Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո զամենայն զրօսանս քո ածեր ի վերայ իմ:

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ, եւ եղին զիս նշաւակ իւրեանց:

Մատնեցայ եւ ո՛չ ելանէի, աչք իմ տկարացան յաղքատութենէ:

Աղաղակեցի առ Տէր զօրհանապաղ, եւ համբարձի առ քեզ զծեռս իմ:

Միթէ մեռելոց առնիցե՞ս զսքանչելիս քո կամ բժիշկք յարուցեալ խոստովան առնիցին առ քեզ:

Միթէ պատմեսցէ՞ ոք երբեք ի գերեզմանի զողորմութիւնս քո, կամ զճշմարտութիւնս քո ի կորստեան:

Միթէ ճանաչիցե՞ն ի խաւարի սքանչելիք քո, կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ:

Ես առ քեզ Տէր աղաղակեցի, առաւօտու ա-  
զօթք իմ ժամանեսցեն առ քեզ:

Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ, կամ դարձու-  
ցանես զերեսս քո յինչն:

Տնանկ եւ վաստակաւոր եմ Ես ի մանկութենէ  
իմմէ, ի բարձրութենէ խոնարհեցայ եւ ապշեցայ:

Յիս հաստատեցաւ բարկութիւն քո, արհա-  
ւիրք քո խոռվեցուցին զիս:

Շրջեցան զինեւ որպէս ջուր, զոր ամենայն  
պաշարեցին զիս ի միասին:

Հեռի արարեր յինչն զրարեկամս իմ եւ զծար-  
նօթս իմ վասն թշուառութեան իմոյ:

Օրհնեա' անձնիմ զՏէր, եւ ամենայն ոսկերք  
իմ զանուն սուրբ նորա:

Օրհնեա' անձն իմ զՏէր, եւ մի՛ մոռանար զա-  
մենայն տուրս նորա:

Ո՛ քաւէ զմեղս քո, բժշկէ զամենայն հիւան-  
դութիւնս քո:

Ո՛ փրկէ յապականութենէ զկեանս քո, պսա-  
կէ զքեզ ողորմութեամբ եւ գթութեամբ:

Ո՛ լնու ի բարութենէ զցանկութիւն քո, նո-  
րոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո:

Առնէ ողորմութիւնս Տէր, եւ իրաւունո ամե-  
նայն զրկելոց:

Եցոյց Տէր զճանապարհս իւր Մովսէսի, եւ  
որդուցն իսրայէլի զկամս իւր:

Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ եւ բա-  
զում ողորմ:

Ո՛ չիսպառ բարկանայ մեզ Տէր, եւ ոչ յաւիտ-  
եան պահէ ոխս:

Ո՛ չըստ մեղաց մերոց արար մեզ Տէր, եւ ո՛չ

ըստ անօրէնութեան մերում հասոյց մեզ:

Այլ որպէս բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց Տէր զողորմութիւն իւր ի վերայ երկիւ-  
ղածաց իւրոց:

Որչափ հեռի են արեւելք յարեւմտից, այն-  
չափ հեռի արար ի մէնջ զանօրէնութիւնս մեր:

Որպէս գթայ հայր ի վերայ որդւոց իւրոց,  
այնպէս գթասցի Տէր յերկիւղածս իւր:

Զի նա գիտաց զստեղծուածս մեր եւ յիշեաց  
թէ հող եմք:

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս  
ծաղիկ վայրի այնպէս ծաղկի:

Շնչէ ի նմա հողմ, եւ ո'չ է, եւ ո'չ եւս երեւի  
տեղի նորա:

Բայց ողորմութիւն Տեառն մնայ յաւիտեանս  
յաւիտենից ի վերայ երկիւղածաց իւրոց, եւ ար-  
դարութիւն նորա յորդւոց մինչեւ յորդիս:

Ոյք պահեն զուխտոն նորա, յիշեն զպատութ-  
րանս նորա եւ առնեն զնա:

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր, ար-  
քայութիւն նորա ամենեցուն տիրէ:

Օրհնեցէ՞ք զՏէր ամենայն հրեշտակք նորա,  
հզօրք զօրութեամբ, ոյք առնէք զբան նորա ի լսել  
ձայնի պատգամաց նորա:

Օրհնեցէ՞ք զՏէր ամենայն զօրութիւնք նորա,  
պաշտօնեայք եւ արարողք կամաց նորա:

Օրհնեցէ՞ք զՏէր ամենայն գործք նորա, զի  
ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա, օրհնեա'  
անձն իմ զՏէր:

Տէ՛ր լուր ազօթից իմոց, ունկնդիր խնդրուա-  
ծաց իմոց ճշմարտութեամբ քով:

Լո՛ւր ինձ արդարութեամբ քով, եւ մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ եւ նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից:

Զանձրացաւ յիս հոգի իմ եւ սիրո իմ խոռվեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո, յարարածս ձեռաց քոց խորհեցայ եւ համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ որպէս ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ Տէր, զի նուաղեցաւ յինէն հոգի իմ:

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ ոյք իջանեն ի գուր:

Լսելի արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի ես ի քեզ Տէր յուսացայ:

Յոյց ինձ ճանապարհ՝ յոր եւ գնացից, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստըւած իմ:

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Վասն անուան քո Տէր, կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ:

Ողորմութեամբ քով սատակեա՛ զթշնամիս իմ, եւ կորո՛ զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ:

Փառք Հօր, եւլն..:

## ԵՐԳ Ս. ՆԵՐՍԻԿԱ

Յիշեսցուք ի գիշերի զանուն քո, Տէր:

Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի, եւ լեզուք  
մեր պատմեսցեն զգործս երկնաւոր թագաւորիդ:

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք  
զքեղ, Տէր:

Զաղօթս մեր տացուք քեղ, Տէր, ի գաւիթս  
քո, ի մէջ նոր Երուսաղէմի:

Ի գիշերի համբարձուք զձեռս մեր սրբու-  
թեամբ առ քեղ, Տէր:

Ի ձայն գոյութեան, ամենայն հոգիք, օրհնե-  
ցէք զՏէր:

Ի. Զարթի'ք, փառք իմ, զարթի'ք, եւ ես  
զարթեայց առաւօտուց. ալէլուիա:

Զարդի'ք որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրն  
լուսոյ. ալէլուիա:

Զարթի'ք փրկեալք արեամբ, եւ տուք զփառս  
փրկողին. ալէլուիա:

Զարթի'ք նոր ժողովուրդք, նոր երդս առեալ  
նորոգողին. ալէլուիա:

Զարթի'ք, հարսունք հոգւով, սպասեալք գա-  
լոյ սուրբ փեսային. ալէլուիա:

Զարթի'ք, փառեալք լուսով, ըստ իմաստուն  
սուրբ կուսանացն. ալէլուիա:

Զարթի'ք, պատրաստեցէք իւղ լապտերաց  
զջերմ արտասուս. ալէլուիա:

Զարթի'ք, եւ մի' ննջէք, նման յիմար կուսից  
նիրհէք. ալէլուիա:

Զարթիք, երկիրպաղցուք, եւ արտասուօք  
զայս ասացուք. ալէլուիա:

փ. Զարթիք, ընդէ՛ր ննջես, Տէր, մի՛ մեր-  
ժեր զմեղ իսպառ:

Արի՛, Տէր, օդնեա՛ մեղ, տացուք անուանդ  
քում զիւառս:

Այժմ եւ յաւէտ Հօր եւ Որդւոյ եւ սուրբ հոգ-  
ւոյն. ամէն:

փ. Զարթուցեալքս, ի զբաղմանէ գիշերային  
հանգստենէ:

Շնորհեցէ մեղ մարդասէր Տէր ի մխիթարու-  
թիւն եւ ի սփոփանքս Եկեղեցւոյ:

Աչիւ եւ դողութեամբ կացցուք ի յաղօթս:

Եկեալ խոստովանեսցուք զյանցանս:

Եւ գտցուք ի Քրիստոսէ զքաւութիւն եւ զմեծ  
զողորմութիւն: Ամէն:

Գկ. Կցորդ. Անբաժանելի եւ համագոյ Եր-  
րորդութեանդ. համաձայնեալք ընդ զօրս երկնից.  
փառս մատուցանեմք:

Փա՛ռք քեղ: Որ յանարուեստ յաթոռ բարձ-  
րացեալ հանդչիս. Սո՛ւրբ Աստուած, հզօր եւ  
սքանչելագործ:

Փա՛ռք քեղ: Որ յանէից դոյացուցեր զամե-  
նայն արարածս. Սո՛ւրբ Աստուած, անճառ Հօր  
անեղ Ուղի:

Փա՛ռք քեղ: Որ տեսչութեամբ խնամես զա-  
մենայն արարածս. Սո՛ւրբ Աստուած, Բղխումն  
անըսպառ աղբեր:

Տէ՛ր: Ժողովրդապետք Եկեղեցւոյ՝ ՚ի քէն  
հայցեն ասելով. Հովիւ բարի, ողորմեա՛ բանա-  
ւոր հօտի:

Ամէն. Ալէլուիա. Ալէլուիա. Ալէլուիա:  
Ամէն. Ալէլուիա. Ալէլուիա. Ալէլուիա:

ԵՐԳ Ս. ՆԵՐՍԵՒԻ

Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս  
լոյս ծագեա: Բղիսումն ի հօրէ, բղիսեա ի հոդ-  
ւոյս, բան քեզ ի հաճոյս:

Դանձդ ողորմութեան, դանձիդ ծածկելոյ,  
դուռդ զիս արա: Դուռն ողորմութեան, դաւա-  
նողիս բաց, դասեցո վերնոցն:

Երրեակ միութիւն, եղելոց խնամող, եւ ինձ  
ողորմեա: Զարթիր Տէր յօդնել, զարթո զթըմ-  
րեալս, զուարթնոց նմանիլ:

Էդ Հայր անսկիզբն, էակից Որդի, է միշտ  
Սուրբ Հոգի: Ընկալ զիս զթած, ընկալ ողորմած,  
ընկալ մարդասէր:


Թագաւոր փառաց, թողութեանց տուռդ,  
թո՛ղ ինձ զյանցանս: Ժողովող բարեաց, ժողով-  
եա եւ զիս, ժողովս անդրանկաց:

Ի քէն Տէր հայցեմ, ի մարդասիրէդ, ինձ բը-  
ժըշկութիւն: Լեր կեանք մեռելոյս, լոյս խաւա-  
րելոյս, լուծանող ցաւոյս:

Խորհրդոց զիտող, խաւարիս չնորհեա, խոր-  
հուրդ լուսաւոր: Ծնունդ հօր ծոցոյ, ծածկելոյս  
ստուերաւ, ծագեա լոյս փառաց:

Կենարար Փրկիչ, կեցո զմեռեալս, կանգնեա  
զգլորեալս: Հաստեա հաւատով, հաստատեա  
յուսով, հիմնեցո սիրով:

Զայնիւս աղաչեմ, ձեռօքս պաղատիմ, ձիր



բարեաց չնորհեա: Ղամբարամբ լուսոյ, ղեկավար ճարտար, դօղեալս ամբացո:

Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց, ճեպելի յերկինս: Միածինըդ հօր, մոյծ զիս յառագաստ, մաքուր հարսանեացդ:

Յորժամ գաս փառօք, յահագին յաւուրն, յիշեա զիս Քրիստոս: Նորոգող հնութեանց, նորոգեա եւ զիս, նորոգ զարդարեա:

Ճնորհատու բարեաց, չնորհեա զքաւութիւն, չնորհեա զթողութիւն: Ուրախացո Տէր, ոգւոյս փրկութեամբ, ոյր վասն եմ ի սուգ:

Զար մշակողին, չար սերմանց նորին, չորացո զպտուղն: Պարզեւիչ բարեաց, պարզեւեա իմոց, պարտեացո թողութիւն:

Զուր չնորհեա աչացս, ջերմ հեղուլ զարտօսր, չնջել զյանցանս: Ուետինդ քաղցու, ոամ հոգւոյս արբո, ոահ ցոյց ինձ լուսոյ:

Մէր անուն Յիսուս, սիրով քով ճմլեա, սիրտ իմ քարեղին: Վասն զթութեան, վասն ողորմութեան, վերստին կեցո:

Տենջալոյդ տեսլեամբ, տուր ինձ յագենալ, Տէր Յիսուս Քրիստոս: Բարունդ երկնաւոր, բոտեա զաշակերտս, բամից երկնայնոց:

Յօղ արեան քո Տէր, ցօղեա ի հոգիս, ցնծասցէ անձ իմ: Իիւծեալըս մեղօք, իւծեալ աղաչեմ, ւիւսել ինձ բարիս:

Փրկիչ բոլորից, փութա զիս փրկել, փորձութեանց մեղաց: Քաւիչ յանցանաց, քաւեա զօրհնաբանս, քեզ երգել զփառս:

Աստուածածնին բարեխօսութեամբ յիշեա, Տէր եւ ողորմեա:

## ԵՐԳ Ա. ՆԵՐՍԻԿԱՆԻ Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՅՑ ԵՒ ՅԱԼՈՒԽՐՄ ՊԱՀՈՅՑ

Աշխարհ ամենայն, առ իս նայեցեալ, ախտակից լերուք: Բանամ զշրթունս, բարբառիմ լեզւս, բողոքեմ զանձնէս, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Գող եղէ մեղաց, գտող կորստեան, գուր ինձ փորեցի: Դաւեցի զանձն իմ, դաւաճանեցի, դարան գործեցի, Տէր ողորմեա, եւլն:

Երբեմն էի լոյս, եւ այժմ եմ խաւար, եւ ըստուեր մահու: Զիարդ պատմեցից, զթիւ մեղաց իմոց, զի բազում են յոյժ, Տէր ողորմեա, եւլն:

Էրկինք եւ երկիր, եկայք ողբացէք, եղկելի զանձն իմ: Ընտրեցի զչարն, ընկալայ կամաւ, ըգհոյլս մեղաց, Տէր ողորմեա, եւլն:

Թաթաւիմ տղմով, թաւալիմ ի մեղս, թօթափիւ չկարեմ: Ժանտախտիւ լցեալ, ժահահոտ եղէ, ժամանակս բազումս, Տէր ողորմեա, եւլն.:

Ի բաց մեկնեցայ, ի սուրբ խորհրդոց, ի բարեաց գործոց: Լաւ վարկաւ անձն իմ, լուսոյն հեռանալ, լինել ընդ խաւար, Տէր ողորմեա, եւլն.:

Խորհուրդը չարին, խարեն զհողիս, խորասոյդ առնեն: Ծածկեն անդնդօք, ծիծաղին գլորմամբ, ծանակ զիս առնեն, Տէր ողորմեա, եւլն.:

Կամաւ կորացայ, կարկամեալս անձամբս, կանգնիլ ո՛չ կարեմ: Հուր մեղաց կիզող, հրդեհեաց որ յիս, հոգեւոր բարիս, Տէր ողորմեա, եւլն.:

Զաղկեցայ մեղօք, ձաղկեցին տեսողք, ձանձրացաւ հոգիս: Ղեղի դառնութեան, զօղեալ ի

սիրտ իմ, զամբար իմ չիջաւ, Տէր ողորմեա,  
եւլն։ :

Ճաշակմամբ մեղաց, ճաշեցի դմահ, ճոխս  
աղքատացայ: Մեռեալ եմ հոգւովս, մոլորեալ մը-  
տօքս, միայն կամ մարմնովս, Տէր ողորմեա,  
եւլն։ :

Յորոգայթ մահու, յորսողին անկայ, յաղթե-  
ցայ յախտից: Նետից թշնամւոյն, նշաւակ եղէ,  
նոր միշտ խոցոտիմ, Տէր ողորմեա, եւլն։ :

Շուրջ պատեալ զինեւ, չունք բազումք եղեն,  
շաղախին արեամբս: Որս եղէ չարին, ուռկանաւ  
մեղաց, որսացաւ զանձն իմ, Տէր ողորմեա, եւլն։ :

Չարաչար վշտօք, չարչարի անձն իմ, չունիմ  
դագարումն: Պարտապան գտայ, պարտուց յան-  
ցանաց, պարտեալս ի մեղաց, Տէր ողորմեա,  
եւլն։ :

Զանամ զղջանալ, ջեռանիմ դարձեալ, ջեռ-  
նում հրով մեղաց: Ռարբի կոչեցայ, ուակայ ա-  
նուանիմ, ուամկական վարուքս, Տէր ողորմեա,  
եւլն։ :

Սիրով ցանկութեան, սաստիկ բարկութեան,  
սիրտ իմ խոցեալ է: Վիրօք յանցանաց, վշտանայ  
հոգիս, վարանեալ շրջիմ, Տէր ողորմեա, եւլն։ :

Տիրեցին ինձ չարք, տարադիր հանին, տիրա-  
կան գրկացն: Բարունոյն բարւոյ, բախճական  
ձայնին, բոտինս ո'չ լուայ, Տէր ողորմեա, եւլն։ :

Ցանկութիւն չարեաց, ցանկալի դիմօք, ցա-  
նցոյց զաշս իմ: Իփերաքանչիւրոց, ւիւսմամբ  
խուռն ախտից, ւիւծեալ է հոգիս, Տէր ողորմեա,  
եւլն։ :

Փութացիր անձն իմ, վախչիւ ի չարեաց,

փափաքիլ բարեաց : Քեզ միշտ մերձ ծանիր , քուն  
մահու եկեալ , քննող դատաւոր , Տէր ողորմեա,  
եւլն :

Աստուածածնին բարեխօսութեամբ , յիշեա  
Տէր եւ ողորմեա :

Քհնի . Զքէն գոհանամք , եւլն . :

— · —

Կանոնագլուխիք կարգաւ ըստ ՈՒԹ ձայնիցն

Ա. Դատեա' Տէր զայնոսիկ , ոյք դատեն զիս ,  
ալէլուիա : Մարտիր ընդ այնոսիկ , որք մար-  
տընջին ընդ իս , ալէլուիա :

Առ զզէն եւ զասպար քո եւ արի' օգնել ինձ ,  
Հա՛ն զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց , արգել  
զնոսա , եւ ասա դու զանձն իմ թէ վրկութիւն քո  
ես եմ , ալէլուիա :

Ամաչեսցեն եւ յամօթ լիցին՝ ոյք խնդրէին  
զանձն իմ , դարձցին յետս եւ ամաչեսցին ոյք  
խորհէին ինձ չար :

Եղեցին նոքա որպէս փոշի առաջի հողմոյ , Եւ  
հրեշտակ Տեառն նեղեսցէ զնոսա :

Եղեցին ճանապարհք նոցա ի խաւար եւ ի  
գայթակղութիւն եւ հրեշտակ Աստուծոյ հալա-  
ծեսցէ զնոսա :

Ի նանիր թագուցին ինձ որոգայթ ապակա-  
նութեան իւրեանց , եւ ի նանիր նախատեցին  
զանձն իմ :

Փ. Տէր՝ յերկինս է ողորմութիւն քո— ճշմար-  
տութիւն քո մինչեւ յամպս , ալէ . ալէ . :

Արդարութիւն քո որպէս յերինք Աստուած ,

իրաւունք քո որպէս խորք բազումք, զմարդիկ եւ  
զանասունք կեցուցանես դու Տէր, ալէ. :

Որպէս զի բազում արարեր զողորմութիւն քո  
Աստուած, այլ որդիք մարդկան ի հովանի թեւոց  
քոց յուսասցին:

Արբեսցին նոքա ի պարարտութենէ տան քո,  
եւ զուղիս փափկութեան քո տացես ըմպել նոցա:

Ի քէն է Տէր աղբիւր կենաց, եւ լուսով երե-  
սաց քոց տեսանեմք զլոյս:

Մագեա' զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն,  
զքեղ, զարդարութիւնս քո ոյք ուղիղ են սրտիւք:

Մի՛ եկեսցեն ի վերայ մեր ոտք ամբարտաւա-  
նից, եւ ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ:

Անդ անկցին ամենեքեան՝ ոյք գործեն զանօ-  
րէնութիւն, մերժեսցեն եւ այլ մի՛ կարասցեն  
հաստատել:

Փառք Հօր. Այժմ եւ միշտ. Ալէ. ալէ. :

Ակ. Ասաց անզգամն ի սրտի իւրում թէ ո'չ  
դոյ Աստուած, ալէլուիա: Ապականեցան եւ պըղ-  
ծեցան յանօրէնութեանց իւրեանց, եւ ո'չ ոք է որ  
առնէ զքաղցրութիւն, ալէլուիա:

Աստուած յերկնից նայեցաւ յամենայն որդիս  
մարդկան, տեսանել թէ իցէ՞ ոք իմաստուն որ  
խնդրիցէ զԱստուած, ալէ. :

Ամենեքեան խոտորեցան ի միասին եւ անպի-  
տանացան:

Ո'չ ոք է որ առնէ զբարի, եւ չէ ոք մինչեւ ի  
մի:

Որպէս ո'չ ծանիցեն ամենեքեան ոյք գործեն  
զանօրէնութիւն:

Ոյք ուտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի, եւ առ Աստուած ո՛չ կարդացին:

Վի. Զի ոչ գոյր նոցա փոխանակ, եւ ո՛չ երկեան յԱստուծոյ, ալէ. ալէ. :

Զգեաց զձեռն իւր ի հատուցանել նոցա, եւ նորա պղծեցին զօրէնս նորա:

Բաժանեցան ի սրտմտութենէ երեսաց նորա, եւ եհաս ի սիրտս նոցա:

Կակուղ էին բանք նոցա քան զձէթ, եւ ինքեան որպէս սլաք:

Ընկեա' ի տէր զհոգս քո եւ նա կերակրէ զքեզ, եւ ո՛չ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ:

Դու Աստուած իջուցես զնոսա ի գուր ապականութեան, արք արիւնահեղք եւ նենդաւորք մի՛ հասարակեսցեն զաւուրս իւրեանց, այլ ես ի քեզ Տէր յուսացայ:

Փառք Հօր. Այժմ եւ միշտ. Ալէ. ալէ. :

— · —

Բձ. Ի քեզ Տէր յուսացայ մի՛ ամաչեցից յաւիտեան, ալէլուիա: Յարդարութեան քում փըրկեա եւ ապրեցո զիս, ալէլուիա:

Խոնարհեցո՛ առ իս զունին քո, եւ կեցո՛ զիս:

Լեր իմ Աստուած ապաւէն, եւ տեղի ամուր կեցուցանել զիս, զի հաստատութիւն իմ եւ ապաւէն իմ զու ես:

Աստուած իմ, փրկեա' զիս ի ձեռաց մեղաւորի, ի ձեռաց անօրինի եւ անիրաւի:

Դու ես համբերութիւն իմ Տէր, Տէր յոյս իմ ի մանկութենէ իմմէ:

Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ յորովայ-

նէ մօր իմոյդու ես ապաւէն իմ , եւ առ ի քէն է օդ-  
նութիւն իմ յամենայն ժամ :

Փ. Երկիրպաղցեն նմա ամենայն թագաւորք  
երկրի , եւ ամենայն ազգք ծառայեսցեն նմա , ալէ .  
ալէ . :

Զի փրկեաց զաղքատն ի ձեռաց հզօրի , զաղ-  
քատն եւ զտնանկն , որոյ ոչ է իւր օդնական :

Խնայեսցէ նա յաղքատն եւ ի տնանկն , եւ  
զանձինս տնանկաց կեցուսցէ ի վաշխից չարաց  
փրկեսցէ զանձինս նոցա :

Պատուական է անուն նորա առաջի նոցա ,  
կեցցէ եւ տացի նմա յոսկւոյն արարացւոց :

Յազօթս կացցեն առ նա յամենայն ժամ , եւ  
զօրհանապազ օրհնեսցեն զնա :

Եղիցի հաստատութիւն ընդ ամենայն երկիր ,  
եւ ի վերայ գլխոց լերանց :

Բարձրացի քան զիրանան պտուղ նորա , եւ  
ծաղկեսցի ի քաղաքի Տեառն որպէս խոտ երկրի :

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան , զի  
յառաջ քան զարեւ է անուն նորա :

Ի նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի , եւ ա-  
մենայն ազինք երանիցեն նմա :

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի որ առնէ  
սքանչելիս միայն , եւ օրհնեալ է անուն սուրբ փա-  
ռաց նորա յաւիտեան , լցցի փառօք նորա ամենայն  
երկիր եղիցի եղիցի :

Փառք Հօր . Այժմ եւ միշտ . Ալէ . ալէ . :

— · —

Բկ. Զողորմութիւնս քո Տէր յաւիտեան օրհ-  
նեցից ալէլուիա : Ազգէ յազգ պատմեցից զճըշ-

ժարտութիւնս քո բերանով իմով + ալէլութա:

Ասացեր թէ աշխարհս ողորմութեամբ շինես-  
ցի, յերկինս պատրաստ եղիցի ճշմարտութիւն քո:

Եղի ուխտ ընտրելոց իմոց, երդուայ Դաւթի  
ծառայի իմոյ:

Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո եւ շինե-  
ցից յազգէ յազգ զաթոռ քո:

Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց  
Տէր եւ ճշմարտութիւն քո յեկեղեցիս սրբոց:

Ո՞վ է յամպս որ հաւասարի քեզ, կամ ո՞վ նը-  
մանիցի Տեառն յորդիս Աստուծոյ:

Փ. Դարձուցեր զօդնութիւն ի սիրոյ նորա, եւ  
ոչ ընկալար զնա ի պատերազմի, ալէ. ալէ.:

Անարգեցեր զսրբութիւն նոր, եւ զաթոռ նո-  
րա յերկիր կործանեցեր:

Նուազ արարեր զաւուրս ժամանակաց նորա,  
եւ հեղեր զնովաւ զամօթ:

Մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո իս-  
պառ, բորբոքեսցի որպէս հուր բարկութիւն քո:

Իսկ արդ յիշեա՛ եւ տե՛ս թէ ո՞վ է իմ հան-  
գիստ, միթէ ի զո՞ւր ինչ ստեղծեր զամենայն որ-  
դիս մարդկան:

Ո՞վ է մարդ որ կեցցէ եւ ո՛չ տեսցէ զմահ, կամ  
փրկեսցէ զանձն իւր ի ձեռաց դժոխոց:

Ո՞ւր են ողորմութիւնք քո Տէր առաջինք, զոր  
երդուար Դաւթի ճշմարտութեամբ քով:

Յիշեա զնախատինս ծառայի քո, զոր ընկա-  
լայ ի ծոց իմ յազգաց բազմաց:

Զոր նախատեցին թշնամիք քո Տէր, նախա-  
տեցին փոխանակ օծելոյ քո:

Օրհնեալ Տէր Աստուած յաւիտեանս յաւիտենից, եղիցի եղիցի:  
Փառք Հօր. Այժմ եւ միշտ. Ալէ. ալէ. :

— · —

Գձ. Խոստովան եղերուք Տեառն զի քաղցր է, ալէլուիա: Զի յաւիտեան է ողորմութիւն նորա, ալէ. :

Ո' խօսեսցի զգօրութիւնս Տեառն, լսելի առասցէ զամենայն օրհնութիւնս նորա:

Երանի ոյք պահեն զիրաւունս, եւ առնեն զարդարութիւն յամենայն ժամ:

Յիշեա զմեզ Տէր ընդ հաճոյս ժողովրդեան քո եւ այց արա մեզ ի փրկութեան քում:

Տեսցուք մեք զքաղցրութիւն ընտրելոց քոց, ուրախ եղիցուք մեք յուրախութիւն ազգի քո, եւ դովիցուք մեք ի ժառանգութեան քում:

Մեղաք մեք ընդ հարսն մեր, անօրինեցաք եւ յանցեաք:

Փ. Մատնեաց զնոսա ի ձեռս հեթանոսաց, տիրեցին նոցա ատելիք իւրեանց, եւ թշնամիք իւրեանց նեղեցին զնոսա, եւ խոնարհ եղեն ի ներքոյ ձեռաց նոցա, ալէ. ալէ. :

Բազում անզամ փրկեաց զնոսա, եւ նոքա դառնացուցին զնա ի խորհուրդս իւրեանց, եւ կորացան յանօրէնութեան իւրեանց:

Հայեցաւ Տէր ի նեղութիւնս նոցա, ի լսել ձայնի ազօթից նոցա:

Յիշեաց զուխտ իւր, եւ զզջացաւ ըստ բազում ողորմութեան իւրում, եւ ետ զնոսա ի գթութիւնս առաջի ամենայն գերչաց նոցա:

Փրկեա՛ զմեղ Տէր Աստուած մեր, եւ ժողով-  
եա զմեղ հեթանոսաց :

Խոստովան եղիցուք անուան քում որբոյ, եւ  
պարծեսցուք յօրհնութիւնս քո :

Օրհնեալ Տէր Աստուած իսրայելի, յաւիտ-  
եանս յաւիտենից :

Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն, եղիցի ե-  
ղիցի :

Փառք Հօր. Այժմ եւ միշտ. Ալէ. ալէ . :

— · —

Գել. Արարի իրաւունս եւ արդարութիւն, ա-  
լէլուիա : Մի' մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց,  
ալէլուիա :

Ընկեալ զծառայս քո ի բարի, զի մի' ամբար-  
տաւանք զզուեսցեն զիս :

Սպասեցին աչք իմ փրկութեան քում Տէր, եւ  
բանից արդարութեան քում :

Արա' ընդ ծառայի քում Տէր ըստ ողորմու-  
թեան քում զարդարութիւնս քո ուսո՛ ինձ :

Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս, եւ  
ծանեայց զվկայութիւնս քո :

Ժամ է պաշտել զՏէր, խափանեցին զօրէնս  
քո :

Կ. Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր  
ըստ բանի քում իմաստուն արա զիս, ալէ. ալէ . :

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր եւ բանիւ քո  
փրկեա զիս :

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո,  
յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո :

Խօսեսցի լեզու իմ զրանս քո, զի ամենայն  
պատուիրանք քո արդարութեամբ են :

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս, զի զպատ-  
փրանս քո ընտրեցի:

Ցանկացայ փրկութեան քում Տէր, եւ օրէնք  
քո խօսք իմ էին:

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ, եւ իրաւունք  
քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ,  
խնդրեա՝ զծառայո քո, զի զպատուիրանս քո ես  
ո՛չ մոռացայ:

Փառք Հօր. Այժմ եւ միշտ. ալէ. ալէ. :

Դձ. Օրհնեա անձն իմ զՏէր օրհնեցից զՏէր ի  
կեանս իմ, ալէ. : Սաղմոս ասացից Աստուծոյ ի-  
մոյ մինչեւ եմ ես, ալէ. :

Մի' յուսայք յիշխանս յորդիս մարդկան, զի  
ո՛չ զոյ փրկութիւն ի նոսա:

Ելցէ հողի ի նոցանէ եւ դարձցին անդրէն ի  
հող, եւ յայնմ աւուր կորիցեն ամենայն խոր-  
հուրդք նոցա:

Երանի' ազգի որոյ Տէր Աստուած Յակորայ  
օդնական է նմա, եւ յոյս նորա ի Տէր Աստուած է:

Ո' արար զերկինս եւ զերկիր, զծով եւ զամե-  
նայն որ ի նոսա:

Ո' պահէ զմշմարտութիւն յաւիտեան, եւ առ-  
նէ իրաւունս զրկելոց:

Վ. Դովեա Երուսաղէմ զՏէր, ալէ. :

Եւ օրհնեա զԱստուած քո Միօն:

Զի զօրացոյց զնիզս դրանց քոց եւ օրհնեաց  
զորդիս քո ի քեզ:

Ո' եղ զահմանս քո ի խաղաղութիւն, պա-  
րաբարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ:

Առաքէ զրան իւր յերկիր, վաղվաղ ընթանան  
պատգամք նորա:

Դնէ զձիւն որպէս զասր եւ զմէգ որպէս փոշի  
ցանեաց:

Արկանէ զսառն որպէս պատառս, առաջի ցըր-  
տոյ նորա ո՞ կարէ կեալ:

Առաքէ զրան իւր եւ հալէ զնոսա, չնչեցեն  
հողմք եւ գնասցեն ջուրք:

Պատմէ զրան իւր Յակոբայ, զարդարութիւն  
եւ զիրաւունս Խորայելի:

Ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր, եւ  
զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց նոցա:

Փառք Հօր. Այժմ եւ միշտ. Ալէ. ալէ. :

Դկ. Սիրեցից զքեղ Տէր զօրութիւն իմ, ալէ. :  
Տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ եւ փրկիչ իմ,  
ալէ. :

Աստուած օդնական իմ, եւ ես յուսամ ի նա,  
ապաւէն իմ եղջիւր փրկութեան իմոյ՝ ընդունելի  
իմ է:

Օրհնելով կարդացից առ Տէր, եւ ի թշնամեաց  
իմոց ապրեցայց:

Շուրջ եղեն զինեւ երկունք մահու, եւ ուղխք  
անօրէնութեան խուլվեցուցին զիս:

Վիշտք դժոխոց պաշարեցին զիս, եւ ժամա-  
նեցին ինձ որոդայթք մահու:

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, եւ  
առ Աստուած իմ աղաղակեցի:

Փ. Զգեցուցիր ինձ զօրութիւն ի պատերազ-  
մի, եւ զյարուցեալսն ի վերայ իմ ներքոյ իմ ա-  
րարեր, ալէ. ալէ. :

Զթշնամիս իմ հալածական արարեր եւ զատելիս իմ սատակեցեր:

Աղաղակեցին եւ ո'չ ոք էր որ փրկէր զնոսա,  
կարդացին առ Տէր եւ ո'չ լուաւ նոցա:

Մանրեցից զնոսա որպէս փոշի առաջի հողմոյ, եւ որպէս կաւ գոեհաց կոխեցից զնոսա:

Փրկեսցէ զիս Տէր ի հակառակութենէ ժողովրդոց, եւ կացուացէ զիս գլուխ հեթանոսաց:

Ժողովուրդ՝ զոր ո'չ դիտէի, ծառայեաց ինձ, եւ ի լուր ականջաց լուաւ ինձ:

Որդիք օտարաց ստեցին ինձ, որդիք օտարաց մաշեցին եւ կաղացան ի շաւղաց իւրեանց:

Կենդանի է Տէր եւ օրհնեալ է Աստուած, եւ բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ:

Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ, եւ հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ:

Փրկիչ իմ ի թշնամեաց իմոց բարկացողաց, յայնցանէ որք յարուցեալ են ի վերայ իմ՝ բարձր արարեր զիս, եւ յառնէ յանիրաւէ փրկեցեր զիս:

Վասն այսորիկ՝ խոստովան եղից քեզ ի հեթանոս, եւ անուան քում սաղմոս ասացից:

Մեծ արարեր զփրկութիւն թագաւորի նորա, առնել ողորմութիւն ընդ օծելոյ նորա Դաւթի եւ ընդ զաւակի նորա յազգէ մինչեւ յազգ:

Փառք Հօր. Այժմ եւ միշտ. Ալէ. ալէ. :

Պարագայի մի եաց առած հայոց և թուրքաց  
առաջական ուժամբ յանցած բարձր առաջական ուժամբ:  
Այս պատճենը այս առաջական ուժամբ յանցած բարձր առաջական ուժամբ:  
Այս պատճենը այս առաջական ուժամբ յանցած բարձր առաջական ուժամբ:  
Այս պատճենը այս առաջական ուժամբ յանցած բարձր առաջական ուժամբ:

## ՀԱՆԳՍՏԵԱՆ ՇԱՐԱԿԱՆ ՍԱՂՄՈՍՔ ԸՆԴ ՌԻԹ ԶԱՅՆԻՑ

Ի տերունի աւուրս եթէ ձայնն աճ է, ասա զայս  
Տէ՛ր, ո՞վ կացցէ ի խորանի քում, կամ ո՞վ  
ընակեսցէ ի լեառն սուրբ քո:

Որ գնայ անբիծ գործէ զարդարութիւն, խօ-  
սի զճշմարտութիւն ի սրտի իւրում:

Որ ոչ նենդաւորեաց լեզուաւ իւրով, եւ չար  
ընկերի իւրում ո՛չ արար:

Նախատինս ի մերձաւորաց նա ո՛չ առնու,  
արհամարհեալ է առաջի նորա չարագործն:

Զերկիւղածս Տեառն փառաւոր առնէ, որ  
երդնու ընդ ընկերի իւրում եւ ոչ ստէ:

Զարծաթ իւր ի վարձու ո՛չ տայ, եւ կաշառս  
ի վերայ իրաւանց ո՛չ առնու, որ զայս արասցէ  
նա մի՛ սասանեսցի յաւիտեան:

— · —

Սաղմու աճ. Տէ՛ր, մի՛ սրտմտութեամբ քով  
յանդիմաներ զիս եւ մի՛ բարկութեամբ քով իրա-  
տեր զիս:

Ողորմեա' ինձ Տէր, զի հիւանդ եմ ես, բժըշ-  
կեա զանձն իմ զի խոռվեցան ոսկերք իմ:

Անձն իմ յոյժ խոռվեցաւ եւ դու Տէր մինչեւ  
յե՞րբ:

Դա՛րձ Տէր, եւ փրկեա' զանձն իմ, կեցո՛ զիս  
Տէր ըստ ողորմութեան քում:

Զի ո՛չ ոք է որ ի մահու յիշէ զքեզ, կամ ի  
դժոխս խոստովան առնիցի առ քեզ:

Վաստակեցայ ես ի հեծութեան իմում, լուա-

զի զամենայն գիշեր զմահիճս իմ, եւ արտասւօք  
իմովք զանկողինս իմ թացի:

Խոռվեցաւ ի սրտմտութենէ ակն իմ, մաշե-  
ցայ ես ի վերայ ամենայն թշնամեաց իմոց:

Ի բաց կացէք յինէն ամենեքեան, ոյք գործէք  
զանօրէնութիւն:

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ Տէր ա-  
զօթից իմոց եւ Տէր զխնդրուածս իմ ընկալաւ:

Ամաչեսցեն եւ խոռվեսցեն յոյժ ամենայն  
թշնամիք իմ, դարձցին յետս եւ ամաչեսցեն յոյժ  
վաղվաղակի եւ խոռվեսցին:

— . —  
Սաղմոս ակ. Բարձր առնեմ զքեղ Տէր զի ըն-  
կալար զիս եւ ո'չ ուրախ արարեր զթշնամին իմ  
յիս:

Տէր Աստուած իմ, կարդացի առ քեզ եւ բժըշ-  
կեցեր զիս, Տէր Հաներ ի դժոխոց զանձն իմ եւ  
փրկեցեր զիս յայնցանէ, որք իջանեն ի գուբ:

Սաղմոս ասացէք Տեառն սուրբք նորա, եւ  
խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա:

Սրտմտութիւն է ի բարկութեան նորա, եւ  
կեանք են ի կամաց նորա:

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտու ե-  
ղիցի ուրախութիւն:

Ես ասացի ի բարեկանդանութեան իմում, թէ  
ո'չ սասանեցայց յաւիտեան:

Տէր ի կամս քո ետուր գեղոյ իմոյ զօրութիւն,  
դարձուցեր զերեսս քո յինէն եւ ես եղէ խոռվեալ:

Առ քեզ Տէր կարդացի եւ առ Աստուած իմ ա-  
ղաղակեցի, զի՞նչ օգուտ է քեզ յարենէ իմմէ թէ  
իջանեմ ես յապականութիւն:

Միթէ հող խոստովա՞ն առնիցէ առ քեզ, կամ  
պատմեսցէ՞ զնշմարտութիւնս քո:

Լուաւ ինձ Տէր եւ ողորմեցաւ, եւ Տէր եղեւ  
ինձ օգնական:

Դարձոյց զոււդ իմ յուրախութիւն, եղերծ  
յինէն զքուբձ եւ ինձ զգեցոյց զուրախութիւն:

Որպէս սաղմոս ասասցեն քեզ փառք իմ, եւ  
այլ մի՛ եւս զղջացոյց, Տէր Աստուած իմ յաւիտ-  
եան խոստովան եղէց քեզ:

— . —

Սաղմոս թձ. Աստուած յանուան քում կեցո  
զիս, եւ ի զօրութեան քում իրաւ արա ինձ:

Աստուա՛ծ, լուր աղօթից իմոց, ունկնդի՛ք  
բանից բերանոյ իմոյ:

Օտարք յարեան ի վերայ իմ, եւ հզօրք խընդ-  
րեցին դանձն իմ, եւ ո՛չ համարեցան զքեզ Աս-  
տուած առաջի իւրեանց:

Ահա Աստուած օգնական իմ, եւ տէր ընդու-  
նող հոգւոյ իմոյ:

Ի դարձուցանել զչարն ի թշնամիսն իմ, ճըշ-  
մարտութեամբ քով սատակեա զնոսա:

Ես կամօք իմովք պատարագս մատուցից  
քեզ, եւ խոստովան եղէց անուան քում Տէր զի  
բարի է:

Յամենայն նեղութենէ իմմէ վրկեցեր զիս, եւ  
ի թշնամիս իմ ետես ակն իմ:

— . —

Սաղմոս թկ. Աստուած ողորմեա՛ մեզ եւ օրհ-  
նեա զմեզ, երեւեցո՛ զերեսս քո ի մեզ եւ ողորմեա  
մեզ:

Ճանաչել յերկրի գճանապարհու քո, յազինս  
ամենայն զփրկութիւնս քո:

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Աս-  
տուած, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք  
ամենայն:

Երկիր ետ զպտուղ իւր, եւ օրհնեաց զմեղ,  
Աստուած Աստուած մեր:

Աստուած մեր օրհնեսցէ զմեղ, ի նմանէ Եր-  
կիցեն ամենայն ծագք Երկրի:

— . —

Սաղմոս գձ. Հաճեցար Տէր ընդ Երկիր քո, եւ  
դարձուցեր զգերութիւն Յակորայ:

Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, եւ  
ծածկեցեր զամենայն մեղս նոցա:

Լոեցուցեր զամենայն սրտմտութիւնս քո, եւ  
դարձար ի բարկութենէ սրտմտութեան քո:

Դա' բձ առ մեզ Աստուած փրկիչ մեր, եւ դար-  
ձո՛ զսրտմտութիւնս քո ի մէնջ:

Մի' յաւիտեան բարկանար մեղ Տէր, եւ մի  
ձգեր զբարկութիւն քո յազգէ մինչեւ յաղզ:

Աստուած՝ դու դարձեալ կեցուցես զմեղ, եւ  
ժողովուրդք քո ուրախ եղիցին ի քեզ:

Յոյց մեզ Տէր զողորմութիւնս քո եւ զփրկու-  
թիւնս քո առ' ւր մեղ:

Լուաք զի՞նչ խօսի Տէր Աստուած մեր, խօ-  
սեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ առ  
սուրբս իւր եւ առ այնոսիկ ոյք դարձեալ են առ  
նա սրտիւք:

Սակայն մերձ է առ Երկիւղածս իւր փրկու-  
թիւն նորա, բնակիլ փառաց նորա յերկրի մերում:

Ողորմութիւն եւ ճշմարտութիւն պատահեսցին արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեսցին:

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն յերկնից երեւեցաւ:

Տէր տացէ զքաղցրութիւն եւ երկիր մեր տացէ զպտուղ իւր, արդարութիւն առաջի նորա գընացէ, դիցէ ի ճանապարհի դդնացո իւր:

— . —

Սաղմոս գկ. Տէր՝ լուր աղօթից իմոց՝ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, եւ մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն:

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո՛ առ իո զունկն քո, յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լո՛ւր ինձ:

Սպասեցան որպէս ծուխ աւուրք իմ, եւ ոսկերք իմ որպէս խոխւ չորացան:

Հարայ ես, որպէս խոտ եւ ցամաքեցաւ սիրտ իմ, մոռացայ ուտել զհաց իմ՝ ի ճայնէ հեծութեան իմոյ:

Կցեցաւ ոսկը իմ ի մարմին իմ, նմանեցայ ես հաւալասան անապատի:

Եղէ ես որպէս բու աւերակի, տքնեցայ եւ եղէ ես որպէս ճնճղուկ միայն ի տանիս:

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապաղ, եւ գովիչք իմ ինեւ երդնուին:

Զմոխիր որպէս զհաց կերի, եւ զըմպելին իմ արտասուօք խառնեցի:

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դու բարձրացուցեր եւ խոնարհեցուցեր զիս:

Աւուրք իմ որպէս հովանի անցին, եւ ես որպէս խոտ ցամաքեցայ:

Դու Տէր յաւիտեան կաս, եւ յիշատակ քո յազգէ մինչեւ յազդ:

Դու յարուցեալ գթասցիս՝ ի վերայ սիօնի ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ:

Սաղմոս դձ. Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր, ըստ բանի քում իմաստուն արազիս:

Մացեն աղօթք իմ առաջի քո Տէր եւ բանիւ քո փրկեա՛ զիս:

Բղինեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո:

Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են:

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս, զի զպատւիրանս քո ընտրեցի:

Յանկացայ փրկութեան քում Տէր, եւ օրէնք քո խօսք իմ էին:

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեղ, եւ իրաւունք քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ, խնդրեա զծառայս քո զի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ:

Ի տերունի աւուրս եթէ ձայնն դկ. և, ասա զայս

Դկ. ի խորոց կարդացի առ քեզ, Տէր, Տէր լուր ձայնի իմում:

Եղեցին ականջք քո ի լսել զծայն աղօթից իմոց:

Թէ զանօրէնութիւնս իմ քննես Տէր, Տէր իսկ  
ո՛ կարէ կալ առաջի քո զի ի քէն է քաւութիւն:

Վասն անուան քո համբերի Տէր, համբեր ան-  
ձըն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ ի Տէր:

Ի պահէ առաւօտու մինչեւ երեկոյ, ի պահէ<sup>1</sup>  
յառաւօտու յուսացաւ իսրայել ի Տէր:

Ի Տեառն է ողորմութիւն բազում, ի նմանէ է  
փրկութիւն, եւ նա փրկեաց զիսրայել յամենայն  
նեղութեանց նոցա:

Սաղմոս դկ. Տէ՛ր լուր աղօթից իմոց, ուն-  
կընդիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ  
քով:

Լուր ինձ արդարութեամբ քով, եւ մի՛ մտա-  
ներ ի դատաստան ընդ ծառայի քում, զի ո՛չ ար-  
դարանայ առաջի քո ամենայն կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ ա-  
րար յերկիր զկեանս իմ, եւ նստոյց զիս ի խաւարի  
որպէս մեռեալ յաւիտենից:

Զանձրացաւ յիս հոգի իմ, եւ սիրտ իմ խոռ-  
վեցաւ յիս:

Յիշեսցի զաւուրան զառաջինս, խորհեցայ յա-  
մենայն դործս քո, յարարածս ձեռաց քոց խորհե-  
ցայ եւ համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ,  
վաղվաղակի լուր ինձ Տէր, զի նուազեցաւ յինէն  
հոգի իմ:

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանի-  
ցիմ այնոցիկ, ոյք իջանեն ի գուր:

Լսելի արա ինձ առաւօտու զողորմութիւնս  
քո, զի ես ի քեզ Տէր յուսացայ:

Ցոյց ինձ ճանապարհ, յոր եւ դնացից, զի առ  
քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց Տէր, զի զքեզ  
ապաւէն ինձ արարի:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո զի դու ես Աս-  
տուած իմ:

Հողի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր  
ուղիղ:

Վասն անուան քո Տէր կեցուցես զիս, արդա-  
րութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ:

Ողորմութեամբ քով սատակեաց զթշնամիս  
իմ, եւ կորո՛ զամենայն նեղիչս անձին իմոյ, զի  
ես ծառայ քո եմ:

— . —

Զինի սաղմուխն աւետարան եւ ապա երգ ըստ  
ձայնի

— . —

### ԵՐԳ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԼԻՄԻ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ՆՆՉԵՑԵԼՈՅ

Ակ. գկ. Ճանապարհ մոլորելոց եւ ճառա-  
դայթ խաւարելոց, հրաւիրեցեր զորդիս լուսոյ ի  
յերկնային հարսանիս քո, ընդ զուարճալից անդ  
ժողովոց. արժանացո զսա դասուց, լի լապտերօք  
մոյծ յառագաստ ըստ իմաստուն սուրբ կուսա-  
նացն:

Մերով բնութեամբ զոր զգեցար ի փայտ խա-  
չին բեւեռեցար, լուծանելով զմեղ ի մեղաց ի նա-  
խահօրն կապանաց, լոյծ եւ զսա ի յանցանաց վա-  
սըն քո սուրբ չարչարանաց, լի լապտերօք եւլն.:

Յետ կամաւոր մահու խաչի եղար ի նոր գերեզմանի, երեքօրեայ թաղմամբ յերկը նոր ըստեղծեր զմեզ կենդանի, զիջեալս ընդ քեզ ի հող մահու, վերագոչեա ձայնին փողոյ, լի լապտերօք եւլն։ :

Աձ. գձ. Ռահ գործեալ երկնաւորաց՝ գան առաջի քո նախընթաց, զընտրեալս քո ժողովելով քեզ ընդ առաջ բերեն ամպով, ընդ աղաւնեաց օդապարից խառնեա զսա սուրբ երամից, դասաւորեա զսա վերնոցն երգել զփառս ընդ զուարթնոցն։ :

Սարսափին տարերք յերկը յորժամ փառօք զսա հայրենի, արեգական լոյս խաւարի լուսինն աստեղին նուաղին, զսա յաւուրն աներեկի լուսաւորեա լուսով քոյին, դասաւորեա եւլն։ :

Բկ. դկ. Աստուած անեղ, անժամանակ, Հայր անսկիզբն եւ անքանակ, որդւոյ պատճառ ծնընդեամբ անճառ, հոգւոյն բղխմամբ անքննաբար, աղաչեմք զքեզ գթած, երկայնամիտ եւ ողորմած, ողորմեա քո ստեղծուածոյս՝ յուսով ի քեզ ննջեցելոց։ :

Բանդ որ ի ծոց հօր միածին, եւ կերպարան սկզբնատպին, որով երկինքը գոյացան, աշխարհ լրիւ հաստատեցան, հայցեմք ի քէն Տէր եւ Փըրկիչ ամենողորմ եւ կեցուցիչ, ողորմեա եւլն։ :

Գերագոյն չնորհեաց բաշխող երկնաւորաց եւ երկրայնոց, կեանք եւ կենաց տուող հոգի, Հօր եւ Որդւոյ արարչակից, խնդրեմք ի քէն աղբիւր բարեաց արբուցանողը ծարաւեաց, ողորմեա եւլն։ :

Բձ. դձ. Ժողովեալքս ի հրաժարումն ծառայի քո յաշխարհէ, հայցեմք ի քէն արտասուելով եւ պաղատիմք զայս ասելով, ճանապարհ ընդ քեզ ելից՝ հանգուցելոյս լեր ուղեկից, ի յօթեւանս հօր քո լուսոյ զննջեցեալսն մեր հանգո։

Ի փրկութեան մերոյ սկզբան մկրտեցար ի Յորդանան, զոր չնորհեցեր նոր աւագան ի մաքրութիւն մեղաց մարդկան, հայցմամք կրկին կարապետին մեծին ի ծնունդս մկրտչին, ի յօթեւանս եւլն։ :

Լուսաւոր ձայնիս յերկնից զքեզ դաւանեաց հայր էակից, աղաւնակերալ հոգին իջեալ առ համագոյդ իւր հանգուցեալ, զմկրտեալս նովին հոգւով յորդեղբութիւն հօր հաւատով, ի յօթեւանս եւլն։ :

Դձ. Զէակիցըդ հօր զորդի, փառաւորեմք անլուելի, որ իջեր յարդանդ կուսին, զաղամայինն առեր մարմին, աղաչանօք Աստուածածնին, անապական քում ծնողին, ողորմած Տէր ողորմեա հոգւոցն մեր ննջեցելոց։

Թագաւոր փառաց Քրիստոս որ ժամանեալ դաս ի յերկնից ի վերայ թեւոց հողմոց քո հայրենի կերպարանօք, եւ առնես հրափորձութեամք զքննութիւն որդւոց մարդկան, ողորմած եւլն։ :

Ուրախացան աղդըք մարդկան յորժամ լուան զքո յարութիւնդ, նորափետուր զարդարեցան ի յարութեան սուրբ միածնիդ, ողորմած եւլն։ :

Վերնական զօրացն պետ փողէ բարբառ աւետարեր, արիք մեռեալք որք յԱղամայ քանզի ահա եկն փեսայ, ընդ հարսնացեալ մաքուր հոգւոց կարդեա զսա ի թիւ սրբոց, դասաւորեա եւլն։ :

## ԱԼԷԼՈՒԻՔ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԻՒՐԱԿՀԻՑ

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա

Աձ. Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր,  
եւ բանիւ Տեառն երկինք հաստատեցան: Եւ հոգ-  
ւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա:

Ալէ. Յարեաւ Աստուած եւ ցրուեցան ամե-  
նայն թշնամիք նորա: Փախեան ատելիք նորա յե-  
րեսաց նորա:

Փառք եւ երկիրապ. Այժմ եւ միշտ, ալէ.:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Ակ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, ա-  
ղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան:  
Տէր բարձրեալ եւ ահարկու, թագաւոր մեծ ի վե-  
րայ ամենայն երկրի:

Ալէ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո, եւ դար-  
ձուցեր զգերութիւն Յակոբայ: Թողեր զանիրա-  
ւութիւն ժողովրդեան քո, եւ ծածկեցեր զամե-  
նայն մեղս նոցա:

Փառք եւ երկիրապ. Այժմ եւ միշտ, ալէ.:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Բձ. Յարեաւ Աստուած եւ ցրուեցան ամենայն  
թշնամիք նորա: Փախեան ատելիք նորա յերե-  
սաց նորա:

Ալէ. Տէր թագաւորաց զվայելչութիւն զգե-  
ցաւ: Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած:

Փառք եւ երկիրապ. Այժմ եւ միշտ, ալէ.:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Բկ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո, եւ դարձու-  
ցեր զգերութիւն Յակոբայ: Թողեր զանիրաւու-

թիւն ժողովրդեան քո, եւ ծածկեցեր զամենայն  
մեղս նոցա:

Ալէ. Օրհնեցէք մանկունք զՏէր, եւ օրհնեցէք  
զանունն Տեառն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ  
յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Փառք եւ երկիրպ. Այժմ եւ միշտ, ալէ.:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Դձ. Տէր թագաւորեաց զվայելչութիւն զզե-  
ցաւ: Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած:

Ալէ. Գովեա Երուսաղէմ զՏէր, եւ օրհնեա  
զԱստուած քո Սիօն: Զի զօրացոյց զնիդս դրանց  
քոց, եւ օրհնեաց զորդիս քո ի քեզ:

Փառք եւ երկիրպ. Այժմ եւ միշտ, ալէ.:

Դկ. Օրհնեցէք մանկունք զՏէր եւ օրհնեցէք  
զանունն Տեառն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ,  
յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Ալէ. Կենդանի է Տէր, եւ օրհնեալ է Աստուած  
եւ բարձր Եղիցի Աստուած փրկութեան իմոյ: Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ եւ հնազանդ առնէ  
զժողովուրդս ընդ ինեւ:

Փառք եւ երկիրպ. Այժմ եւ միշտ, ալէ.:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Դձ. Գովեա Երուսաղէմ զՏէր, եւ օրհնեա  
զԱստուած քո Սիօն: Զի զօրացոյց զնիդս դրանց  
քոց, եւ օրհնեաց զորդիս քո ի քեզ:

Ալէ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, ա-  
ղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան: Տէր  
բարձրեալ եւ ահարկու, թագաւոր մեծ ի վե-  
րայ ամենայն երկրի:

Փառք եւ երկիրպ. Այժմ եւ միշտ, ալէ.:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Դկ. Կենդանի է Տէր եւ օրհնեալ է Աստուած  
եւ բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ:  
Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ եւ հնազանդ առնէ  
զժողովուրդս ընդ ինեւ:

Ալէ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, ար-  
դաղակեցէք առ Աստուած ի ճայն ցնծութեան:  
Տէր բարձրեալ եւ ահարկու, թագաւոր մեծ ի վե-  
րայ ամենայն երկրի:

Փառք եւ երկիրպ. Այժմ եւ միշտ, ալէ. :

— · —

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, ի յայսմհետէ  
մինչեւ ի յաւիտեան: Օրհնեցէք, մանկունք  
զՏէր, եւ օրհնեցէք զանուն Տեառն:

Եղիցի անուն Տեառն օրհնեալ ի յայսմհետէ  
մինչեւ ի յաւիտեան: Յարեւելից մինչ ի մուտս  
արեւու օրհնեալ է անուն Տեառն: Ի յայսմ հետէ  
մինչեւ ի յաւիտեան:

Փառք եւ երկրպագութիւն Հօր եւ Որդւոյ եւ  
սրբոյ Հոգւոյն. եւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւիտենից ամէն. ի յայսմ հետէ մինչեւ ի յա-  
ւիտեան:

Դպ. Արի՛, Տէր, օգնեա մեզ, եւ փրկեա զմեզ,  
վասն անուան քո:

Արի՛ եւ մի՛ մերժեր զմեզ իսպառ, վասն ան-  
ւան քո:

Թագաւորեսցէ Տէր յաւիտեան՝ Աստըւած քո  
Սիօն, յազգէ յազգ:

Օրհնեա՛, անձն իմ զՏէր, օրհնեցից զՏէր ի  
կենդանութեան իմոյ:

Դպ. Օրթի՛:

Քհնյ. Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգույդ քում:

Դպ. Երկիւղածութեամբ լուարուք:

Քհնյ. Սրբոյ Աւետարանիս որ ըստ,

Դպ. Փա՛ռք քեզ, Տէր Աստուած մեր:

Դպ. Պոսիսումէ՛:

Դպ. Ասէ Աստըւած:

Դպ. Փա՛ռք յարութեան քո, Տէր, ո՛չ դա-  
դարեցայց Քրիստոս, օրհնեալ զքեզ զամենայն ա-  
ւուրս կենդանութեան իմոյ:

— . —

Փա՛ռք յարութեան քո, Տէր, ո՛չ դադարե-  
ցայց Յիսուս, զովել զքեզ զամենայն աւուրս կեն-  
դանութեան իմոյ:

Ես ոչ դադարեցայց, Փրկիչ, փառաւորել ըդ-  
քեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբու-  
թիւն, եւ օրհնեցէք զՏէր:

Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեսոն՝  
զՏէր ի սրբութիւն, եւ օրհնեցէք զՏէր:

Լուսապայծառ հրեշտակն՝ նստելով ի կեն-  
սատու գերեզմանին: Եւ աւետէր կանանց. յար-  
եաւ Աստուած:

— . —

## ԵՐԳ ՄԵԾ ՊԱՀՈՑ ԿԻՒՐԱԿԷՒՑՆ

(Երիցս կրկնեա՛ եւ զյետինն բարձր ասա)

Զամենայն աւուրս կենաց իմոց, Ես ո՛չ դա-  
դարեցայց օրհնեալ զքեզ, Քրիստոս, փրկիչդ աշ-  
խարհի:

Զամենայն աւուրս : (Կըկնէ)

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն եւ օրհնեցէք զՏէր :

Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն, զՏէր ի սրբութիւն եւ օրհնեցէք զՏէր :

Գալստեան . Դասք լուսեղէն զուարթնոցն ըսպասէին մեծի գալստեան Տեառն : Եւ երդէին երգնոր, օրհնեալ է քո սուրբ գալուստդ :

Համբարձման . Համբարձէ՞ք իշխանք, զԴըրունս ձեր ի վեր : Եւ գայ մտանէ փառօք ի փառս :

Հոգեգալստեան . իջեալ հոգին յառաքեալսն և հրազինեաց զընտրեալսն անկեղծ ի սուրբ վերնատունն, եւ հանգեաւ նոքօք յազդս մարդկան դանաղան լեզուաց բաժանմամբ :

Վարդավառ . Յնծայ թափօր Հերմոնիւ, եւ առաքեալքն ի հայրական ձայնէն թմբեալք : Եւ կենդանեաց եւ մեռելոց տէր ծանուցին զքեզ Մովսէս եւ Հեղիսա :

Խաչ . Այսօր եկեալ կամաւ Տէրն ի խաչ, եւ տարածեաց զբազուկս իւր ի նմա :

Ծննդեան . Հոյլք հողեղէնք ընդ հովիւսն քարոզէին ի յանրանից մըսուր զբանըն բազմեալ : Եւ մոգքն աստեղքն զուշակեալ մատուցին զընծայսն խորհրդոյ :

Տեառնիդառաջ . Քառասնօրեայ տղայ եւ Տէրն օրինագիր տնօրինարար եկն ի տաճարն : Եւ Սիմէօն զգուէր գըրկօքն, եւ յօրինաց կապից լուծումն հայցէր ի կեանս առետարանի :

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՌԱԽՈՏՈՒ

Գլ. Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս, օրհնեալ ես, Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ եւ գովեմք զքեզ։ Խոստովանիմք Տէր զքեզ եւ երկիրպագանեմք քեզ։ Վառաւորեմք զքեզ, գոհանամք Տէր զքէն վասն մեծի փառաց քոց։ Տէր թագաւոր, սուրբդ երկնային, Աստուած եւ Հայր ամենակալ։ Տէր եւ որդի հօր միածին, Յիսուս Քրիստոս եւ սուրբ որդի։ Տէր Աստուած, Գառն Աստուծոյ եւ որդի հօր, որ առեր զմերս ի կուսէն։ Ողորմեցար, բարձեր ըզմելս աշխարհի, եւ արդ ընկալ զաղաչանս մեր։ Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր, ողորմեաց մեզ։ Զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Տէր եւ հոգիդ սուրբ՝ որ ի փառս Աստուած ընդ հօր. Ամէն։

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ Տէր, եւ գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից։ Արժանի արա, Տէր, զօրս զայս խաղաղութեամբ եւ առանց մեղաց պահեա զմեզ։ Օրհնեալ ես, Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ եւ փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս. ամէն։ Օրհնեալ տէր, ուսո՛ ինձ զարդարութիւնս քո (երիցս կրկնեա)։ Տէր, ապաւէն եղեր մեր յազգէ յազգ։ Ես աղաչեմ, Տէր, ողորմեա ինձ եւ բժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ քեզ։ Ցո՛յց մեզ Տէր զողորմութիւնս քո եւ զփրկութիւնըս քո տո՛ւր մեզ։ Տէր, ողորմութիւն քո յաւիտեան, զզործս ձեռաց քոց մի անտես առներ։ Տէր

իմ, զքեղ ապաւէն ինձ արարի, ուսո՛ ինձ առնել  
զկամո քո, զի դու ես Աստուած իմ: Ի քէն է Տէր,  
աղրիւ կենդանութեան եւ լուսով երեսաց քոյժ  
անսանեմք զլոյս: Ծագեա՛ զողորմութիւնս քո՝  
որք ճանաչեն զքեղ Տէր:

Մաղթ. Փառք, պատիւ եւ երկրապատմութիւնն  
բարձունս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն որբոյ. այժմ  
եւ միշտ:

Աձ. ակ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք,  
զՓրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն:

Յարեաւ Աստուած եւ ցրուեցան ամենայն  
թշնամիք նորա: Փախեան ատելիք նորա յերեսաց  
նորա:

Բձ. բկ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք:

Զյարուցեալն զՔրիստոս օրհնեսցուք, եւ ըգ-  
յարութիւն նորա փառաւորեսցուք:

Գձ. գկ. Զյարութիւն չՓրկչին օրհնեսցուք:

Որ ելն ի բարձունս եւ գերեաց զգերութիւն.  
էտու աւար, բաշխեաց պարզեւո եւ ետ որդւոց  
մարդկան:

Դձ. դկ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք:

Որ համբերեաց խաչի եւ եղաւ ի նորափոր  
վիմի, եւ Աստուածային յարութեամբն զմահաց-  
եալսն վերաբերեաց ի կեանս:

— . —

## ԵՐԳ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք, զՓրկչին  
մերոյ օրհնեսցուք զյարութիւն:

Համբարձաւ Աստուած օրհնութեամբ եւ Տէր  
մեր ճայնիւ փողոյ:

Հոգեգալստեան. Զգալուստ Հոգւոյն օրհնեսցուք. զՀոգւոյն սրբոյ օրհնեսցուք զգալուստ Յեկեղեցիս բարերանեցէք զԱստուած եւ զՏէր յաղըրերացն իսրայելի:

Ծաղկազարդի. Այսօր մտանէ թագաւորն մեր Քրիստոս ի յԵրուսաղէմ նոր քաղաք Դաւթի:

Ընդ առաջ ելին ծերքն ոստովք ձիթենեօք, եւ զԱստուածորդին փառաւորէին:

Վառդավառի. Քո են երկինք եւ քո է երկիր, զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր:

Զհիւսիս եւ զհարաւ դու արարեր, Թափօր եւ Հերմօն յանուն քո ցնծասցեն:

Ծննդեան եւ Աւետման. Իջէ որպէս զանձրեւ ի վերայ զեղման, որպէս ցող զի ցողէ յերկիր:

Աստուած զիրաւունս քո արքայի տուր, եւ զարդարութիւն քո որդւոյ թագաւորի:

Խայի. Ետուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան:

Որպէս փրկեցին սիրելի քո, կեցո աջով քով եւ լուր մեզ:

Ցայտնութեան եւ Տեառնընդառաջի. Արեգակն արդարութեան այսօր յայտնեցար աղգի մարդկան, մարդ եղեալ սրբեցիր զջուրս վերածեալ զմեզ մկրտութեամբ սրբոյ Հոգւոյն:

Ի վայելչութիւն փառաց սրբութեան քո, ի յարգանդէ յառաջ քան զարուսեալ ծնայ զքեղ, մարդ եղեալ:

— . —

Դպ. Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ... վասն մեր, ողորմեա՛ մեզ: (Երիցս կրկնեա)

Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս  
առ զաղաչանս մեր որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ:  
ՄԱՂԹ. Փրկել զմեղ ի փորձութենէ եւ յամե-  
նայն վտանգից մերոց:

ՔԱՐՈԶ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա. :

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի  
աղաչանաց մերոց բարեխօսութեամբ սուրբ Աստ-  
ածածնին: Եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմու-  
թեան եւ դժութեան Տեառն Աստուծոյ: Ամենա-  
կալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

### ՍԱՆՄՈՍ ՃՁԲ.

Դպ. Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ  
հետէ մինչեւ յաւիտեան:

Օրհնեցէ՞ք մանկունք զՏէր, եւ օրհնեցէ՞ք զա-  
նունն Տեառն:

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ հետէ  
մինչեւ յաւիտեան:

Յարեւելից մինչ ի մուտս արեւու օրհնեալ է  
անուն Տեառն:

Բարձր է ի վերայ ամենայն աղգաց Տէր, եւ  
յերկինս են փառք նորա:

Ով է որպէս Տէր Աստուած մեր ի բարձունս  
բնակեալ եւ զխոնարհս տեսանէ յերկինս եւ յերկ-  
րի:

Յարուցանէ զաղքատս յերկը եւ բարձր առնէ  
զտառապեալս յաղբերաց:

Նստուցանէ զնոսա իշխանս ընդ իշխանս ժո-  
ղովրդեան իւրոյ:

Բնակեցուցանէ զամուլն ի տան ուրախամիտ,  
որպէս մայր որդւովք բերկրեալ: Օրթի, եւլն. :

## ԵՐԳ ՄԻԱՇԱԲԱԹԻ ԱԽՈՒՐ

Դպջ. Նորաստեղծեալ բանն յանէից ի սկզբանէ զերկինս երկնից, եւ զերկնային զօրս անմարմնոյ իմանալեացն զուարթնոց եւ զգալի տարերց քառից հակառակաց միաբանից, որով յաւէտ փառաբանի Երրորդութիւնն անձառելի:

Երեքսրբեան մի տէրութիւն, միով բնութեամբ աստուածութիւն, լոյս որ անեղ արարչական ասաց լինել լոյս եղական, զոր եւ ծագեաց յօրն առաջին միաշաբաթ կիւրակէին, որով յաւէտ փառաբանի Երրորդութիւնն անձառելի:

Բարունօրէն բացատրեսցուք, զծածկեալ խորհուրդն ծանիցուք, զի լոյս անտես իմանալի, մաքուր հոգւոց տեսանելի, ի սոյն ծագեաց միաշաբաթ մեղ յարութեան սուրբ ճառագայթ, եկայք փրկեալք ընդ զուարթնոյն տուք օրհնութիւն յարուցելոյն:

Սէրդ սիրով խոնարհեցար, ի փրկութիւն մեր մարմնացար, նովին մարմնովն խաչեցար, ի գերեզման մահու եղար, այսօր յարեար աստուածաբար, ի հրեշտակաց քարոզեցար, եկայք փրկ. :

Երեւեցար խնկաբերիցն յողջոյն կենաց ուրախալից, և ի լերինն Գալիլիա առաքելոց մետասանից, արժանացո զմեղ ընդ նոսին զքեղ տեսանել յօրն վերջին, եկայք փրկ. :

Սիօնի որդիք, զարթի'ք, հարսին լուսոյ տուք աւետիք եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեաց մահու իշխանութեամբ. դայ պսակէ զքեղ փառօք, ել ընդ առաջ պճնեալ զարդուք, երգեա երգ նո՞յ յարուցելոյն ննջեցելոց կենաց պտղոյն:

## ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

Դպ. Խորհուրդ խորին անհաս անսկիզբն, որ զարդարեցեր զվերին պետութիւնդ. ի յառագաստ անմատոյց լուսոյն. գերապանծ փառօք զդասս հրեղինաց :

Անձառահրաշ զօրութեամբ ստեղծեր զԱղամ պատկեր տիրականն, եւ նազելի փառօք զգեստաւորեցեր ի դրախտն Աղենի տեղի բերկրանաց :

Զարչարանօք քո սուրբ միածնիդ, նորոգեցան արարածք ամենայն եւ վերստին մարդն անմահացաւ, զարդարեալ ի զգեստ անկողոպտելի :

Անձրեւածին բաժակ հրահոսան, որ հեղարյառաքեալսն ի սուրբ վերնատան, հեղ եւ ի մեզ Հոգիդ սուրբ Աստուած ընդ պատմուճանին զքու զիմաստութիւն :

Տան քում վայելէ սրբութիւն որ զգեցար ըլլ վայելչութիւն. սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ, պատեա զմէջս մեր ճշմարտութեամբ :

Որ զարարչագործ բազուկս քո տարածեցեր ընդ դէմ աստեղաց, հաստատեա զբազուկս մեր կարողութեամբ. համբարձմամբ ճեռաց առ քեզ միջնորդիլ :

Իիւսմամբ թագ ի գլուխ պատեսցես զմիտս եւ զգայարանս, խաչանիշ ուրարմամբ ըստ ահարովնի ծաղկեալ ոսկեթել ի զարդ խորանին :

Բամից բոլորից տիրապէս աստուածպետական, նախորտապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր, քում սուրբ խորհրդոյդ լինիլ սպասաւոր :

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ

պահեա, եւ զերկրպագուս անուանդ քում պահեա  
ի խաղաղութեան:

Քհնյ. Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնին:

Մրկ. Սուրբ զԱստուածածնին եւ զամենայն  
սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինտ  
զի կամեցեալ ողորմեսցի եւ գթացեալ կեցուսցէ  
զարարածս իւր: Ամենակալ Տէր Աստուած մեր  
կեցո՛ եւ ողորմեա՛:

Քհնյ. Բնիկայ Տէր, զադաչանս մեր բարեխօս:

Դպ. Յիշեցիր եւ զմեզ առաջի անմահ Գառինն  
Աստուծոյ:

Քհնյ. Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն  
Աստուծոյ:

— . —

### ՓՈԽ

Դպ. Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր,  
ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:

Մտէք առաջի նորա ցնծութեամբ, ծաներուք  
զի նա է Տէր Աստուած մեր:

Նա արար զմեզ եւ ոչ մեք էաք, մեք ժողո-  
վուրդ եւ խաչն արօտի նորա:

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ  
եւ օրհնութեամբ ի յարկս նորա:

Խոստովան եղերուք Տեառն եւ օրհնեցէք զա-  
նուն նորա:

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նո-  
րա, յազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նորա:

Փառք հօր եւ որդոյ եւ հոգւոյն սրբոյ:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ա-  
մէն:

Սրկ. Սուրբ Եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր՝  
զի սովաւ փրկեսցէ զմեղ ի մեղաց եւ կեցուսցէ շը-  
նորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր  
Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

Քհեյ. Ի մէջ տաճարիս եւ առաջի եւայլն:

Մտից առաջի սեղանոյ Աստուածոյ առ Աստ-  
ւած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Սրկ. Դատ արա ինձ, Աստուած, եւ իրաւ ա-  
րա ինձ ի դատաստանի իմում:

Քհեյ. Յազգէ որ ոչ է սուրբ ի մարդոյ մեղա..:

Սրկ. Օրհնեցուք զամենակալն Աստուած,  
զշայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ար-  
ժանի արար զմեղ կալ ի տեղւոջս փառարանու-  
թեան, եւ երգել զերգս հոգեւորս, ամե..:

Քհեյ. Ի յարկի սրբութեան եւ ի տեղւոջս  
փառարանութեան:

— . —

### Շարական խնկարկութեան

Դպ. Յայս յարկ նուիրաց ուխտի Տեառն Տա-  
ճարիս. Ժողովեալքս աստանօր ի խորհուրդ պաշ-  
տաման պաղատանաց յառաջիկայ Սուրբ Պատա-  
րագիս, խնկովք անուշիւք խումբ առեալ պարեմք  
ի վերնայարկ սրահս խորանիս, ուղղութեամբ  
ընկալ զաղօթս մեր որպէս բուրումն անուշահոտ  
խնկաց տաշխսից եւ կինամոնաց. եւ զմատուցողս  
պահեա սրբութեամբ միշտ եւ հանապազ քեզ ըս-  
պասաւորել: Բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի  
ընկալ զաղաչանս քոց պաշտօնէիցս: Որ գերազոյն  
քան զերկինս պայծառացուցեր սուրբ զեկեղեցի  
արեամբ քո Քրիստոս, եւ ըստ երկնայնոցն կար-

գեցեր ի սմա զգաստ առաքելոց եւ մարդարէից, սուրբ վարդապետաց, այսօր ժողովեալք դասք քահանայից, սարկաւագաց, դպրաց եւ կղերիկոսաց, խունկ մատուցանեմք առաջի քո Տէր, յօրինակ ըստ հնումն Զաքարիայ, ընկալ առ ի մէնչ ըստ խնկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Արէլի, զնոյի եւ զԱրրահամու:

Բարեխօսութեամբ վերին քո զօրացդ միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայ:

## ՇԱՐԱԿԱՆՔ ԹԱՓՈՐԻ

Աձ. Կանանցն կանխելով ի թաղումըն կենդանոյն, տեսին ըզվէմն ի դրանցն ի բաց մերժեալ: Թափուր ըզգերեզմանն եւ ունայն տեսանէինն եւ տըրտմութեամբ լային յուսահատեալք: Մայր խաչեցելոյն զի՞ լաս յուսահատեալ, քանզի Քրիստոս փառօք մեծաւ, յարեաւ:

Բձ. Զայն աւետաւոր հրեշտակին զուարճացոյց զառաւօտեան կանայսն, զՔրիստոսի պատմելով զյարութիւն: Մի յուսահատիք տրտմութեամբ այլ ցնծացէք բերկրելով. խնկազգեացք աստուածայնոյն եւ փափաքողք յարութեան:

Գկ. Տեսիլ փայլակնածեւ զուարթնոյն ի վիմին հնչեցեալ առ խնկազգեաց կանայսն, փարատեցոյց զերկիւղալից տրտմութիւնն: Պահապանքն պակուցեալ ահարեկ լինէին եւ կանանցն աւետարանեալ մահ մահու յաղթեաց եւ ծանուցաւ մահ: Քարոզս առաքելով առ երջանիկ առաքեալսն, փութացարուք ի Գալիլիա եւ տեսանիցէք զկենազործողն զՔրիստոս:

Դձ. Փառաբանակից Հօր Որդի, որ վասն մեր  
խաչեցար, զդըժոխս աւերեալ յարմար մաւուր  
երրորդի, փառք յարութեան քո Տէ՛ր: Հրեշտա-  
կապետին իջումն որ զպահապանսն երկիւղիւ  
զարհուրեցոյց առ դրանըն գերեզմանին, փառք  
յարութեան: Եւ ըսքանչելի սուրբ կանանցն ա-  
ւետարանէր ասելով. յարեաւ Քրիստոս յարու-  
ցիչըն մեռելոց. փառք յարութեան:

Սրկ. Օրհնեա Տէր:

Քհնյ. Օրհնեալ թագաւորութիւն Հօր Եւ:  
Եւ ասի ժամամուտ բատ պատշաճի աւուրն

Սրկ. Եւ եւս խաղաղութ. : Օրհնեա Տէր:

Քհնյ. Օրհնութիւն Եւ: Խաղաղութիւն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում :

Սրկ. Աստուծոյ երկիրապագեսցուք:

Դպ. Առաջի քո, Տէր:

Քհնյ. Տէր Աստուծած մեր, որոյ կարողութ. :

— . —

## ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆՔ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Տէր թագաւորեաց զվայելչութիւն զգեցաւ

Աձ. Զթագաւորն փառաց Քրիստոս որ վասն  
մեր մարմնացաւ ի սրբոյ կուսէն եւ խաչի համբե-  
րելով, միաբանութեամբ երգով բարեբանես-  
ցուք: Որ զթաղումն երեքօրեայ յանձն էառ յա-  
րուցեալ ի մեռելոց իշխանութեամբ, միաբանու-  
թեամբ: Կարողապէս զդրունս դժոխոց խորտակ-  
եաց, եկեղեցոյ իւրում զգեցոյց մեծ վայելչու-  
թիւն, միաբանութեամբ:

Ակ. Թագաւորեաց Աստուծած ի վերայ հեթա-  
նոսաց եւ լուսազարդեալ պայծառացոյց սուրբ

զեկեղեցի, ժողովուրդք զ՞րիստոսի բարերանեցէք: Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած, քանզի շիջոյց զիսայթոց մահու խաչիւն իւրով սրբով, ժողովուրդք: Յարեաւ Աստուած եւ տիեզերք ամենայն նորափետուր զարդարեցան եւ մանկունըք հաղորդեցան մարմնոյ եւ արեան կենարարին, ժողովուրդք:

Բձ. Թագաւորին յաւիտենից մատուցուք զօրհներգութիւն որ ի կուսէն մարմնացաւ, հաստատեաց զաշխարհս ի հաւատս անսասանելի, փառք նմա այժմ եւ յաւիտեան: Որ կամաւ համբեր մահու խաչի Աստուած բանն եւ եհեղ զարիւն իւր սուրբ ի փրկութիւն տիեզերաց, փառը նմա: Աստուածապէս յարուցեալ ի նորափոր ի վիմէն լուսազարդեաց զեկեղեցի իւր սուրբ ի փառս եւ ի գովեստս անուան իւրոյ, փառը նմա:

Բկ. Օրհնութիւն ի բարձունս անօրինեցելոյն ի կուսէն թագաւորին մերոյ Ալէլուիա, ալէլուիա: Օրհնութիւն ի բարձունս անսասանելի եւ հաստատուն յուսոյն մերոյ Ալէ: Օրհնութիւն ի բարձունս անբաժանելի եւ միասնական սուրբ Երրորդութեանն Ալէ:

Գձ. Զթագաւորն Քրիստոս օրհնութեամբ երդով բարերանեցէք, ամենայն երկիր: Արարողին երկնի եւ երկրի մատուցուք երգով գոհաբանութիւն ամենայն երկիր: Երրորդութեանն եւ մի Աստուածութեանն մատուցուք պատիւ, երկըրպագութիւն յաւիտեանս ամէն:

Գկ. Լուսով աստուածութեան քո Քրիստոս, լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի, պահեա զսա անշարժ յաւիտեան: Տօն է այսօր յերուսաղէմ հա-

ւատացելոց բազմութեամբ զնաւակատիս սուրբ  
եկեղեցւոյ, պահեա զսա: Բացան դրունըք հա-  
ւատոյ նոր Սիովնի ընդունիլ զանմահ փեսայն յա-  
ռագաստ, բաշխէ զմարմին քո եւ զարիւն, պահեա  
զսա:

Դձ. Թագաւոր Քրիստոս էակից Հօր եւ Հոգ-  
ւոյն, որ վասն մեր մարմնացար ի սուրբ Կուտէն,  
թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք: Որ կա-  
մաւոր մահուամբ զմահ մեռուցեր, եւ անապական  
յարութեամբդ քո նորոգեցեր զաշխարհ, թագա-  
ւոր փա: Որ կենդանարար արեամբդ քո լուսա-  
ւորեցեր սուրբ զեկեղեցի, երգեմք քեզ ընդ հրեշ-  
տակս ասելով, թագաւոր փա: :

Դկ. Որ անբաւելի յաղթող զօրութեամբ թա-  
գաւոր ես երկնի եւ երկրի Քրիստոս Աստըւած,  
օրհնարանեմք զքեզ: Որ փառակցութեամբ ընդ  
Հօր վերօրհնիս յանմահից եւ խոնարհեալ մարմին  
զգեցար փառաց թագաւոր, օրհնարա: Որ կա-  
րողապէս զմահ կոխեցեր եւ յարուցեալ լուսաւո-  
րեցեր սուրբ զեկեղեցի անմահ էութիւն, օրհ-  
նարա:

Մրկ. Օրհնեա Տէր:

Քհնյ. Զի քո է կարողութիւն եւ զօրութիւն:

Մրկ. Պոսխումէ:

Դպ. Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ  
եւ անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ:  
(Երիցս կրկնեա):

Մրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչ:

Դպ. Տէր ողորմեա:

Մրկ. Վասն խաղաղութեան ամենայն աշխար-

Հի եւ հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զՏէր ա-  
ղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա' :

Սրկ. Վասն հայրապետին մերոյ Տեառն (այս  
անուն) կենաց եւ փրկութեան հոգւոյ նորին,  
զՏէր աղաչ. :

Դպ. Տէր ողորմեա' :

Սրկ. Վասն վարդապետաց, քահանայից,  
սարկաւագաց, դպրաց եւ ամենայն ուխտի ման-  
կանց եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա' :

Սրկ. Վասն բարեպաշտ թագաւորաց եւ աստ-  
ւածասէր իշխանաց, զօրավարաց եւ զօրաց նոցին  
զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա' :

Սրկ. Վասն հոգւոցն հանգուցելոց որք:

Դպ. Յիշեա' Տէր եւ ողորմեա' :

Սրկ. Եւ եւս միաբան վասն ճշմարիտ:

Դպ. Տէր ողորմեա' :

Սրկ. Զանձինս մեր եւ զմիմեանս:

Դպ. Քեզ Տեառնդ, յանձն եղիցուք:

Սրկ. Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր:

Դպ. Տէր ողորմեա', Տէր ողորմեա', Տէր ող. :

Սրկ. Օրհնեա Տէր:

Քհնյ. Զի ողորմած եւ մարդասէր ես:

Գիրքն եւ Աւետարանն կը կարդացուի

— . —

## ԱԼԷԼՈՒԻՒԱՅՔ ՃԱՇՈՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Աձ. Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սիօ-  
նի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ:

Ակ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն ի նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց :

Բժ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան :

Բկ. Արի, Տէր Աստուած իմ ի հրամանս քո զոր պատուիրեցեր եւ ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքեւ :

Գձ. Ուրախ եղեւ իսրայէլ յարարիչ իւր, որդիք Սիօնի ցնծասցեն ի թագաւորն իւրեանց :

Գկ. Եկայք եւ տեսէք զգործս Աստուծոյ. որպէս զի ահեղ են խորհրդով քան զամենայն որդիս մարդկան :

Դձ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո եւ դարձուցեր զգերութիւն Յակոբայ :

Դկ. Յարեաւ Աստուած եւ ցրուեցան ամենայն թշնամիք նորա, փախեան ատելիք նորա յերեսաց նորա :

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր :

Մրկ. Հաւատամք . . .

Մրկ. Օրհնեա Տէր :

Քհնյ. Իսկ մեք փառաւորեսցուք :

Մրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչես . . :

Դպ. Ամէն, Տէր ողորմեա :

Մրկ. Եւ եւս հաւատով աղաչեսցուք եւ խընդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի փրկչն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտաման եւ աղօթից :

Դպ. Կեցո Տէր :

Մրկ. Զժամ սուրբ պատարագիս եւ զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել :

Դպ. Շնորհեա՛ Տէր :

Սրկ. Զէրեշտակ խաղաղութեան պահ. :

Դպ. Շնորհեա' Տէր:

Սրկ. Զքաւութիւն եւ զթողութիւն:

Դպ. Շնորհեա' Տէր:

Սրկ. Զսրբոյ խաչին մեծ եւ կարող զօրութ. :

Դպ. Շնորհեա' Տէր:

Սրկ. Եւ եւս միաբան վասն ճշմարիտ:

Դպ. Տէր ողորմեա' :

Սրկ. Զանձինս մեր եւ զմիմեանս:

Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Սրկ. Ողորմեա' ց մեզ, Տէր Աստուած մեր:

Դպ. Տէր ողորմեա', Տէր ողորմեա', Տէր ող. :

Սրկ. Օրհնեա Տէր:

Քհնյ. Որպէս զի արժա. : Խաղաղութիւն. :

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Աստուածոյ երկիրպագեսցուք:

Դպ. Առաջի քո Տէր:

Քհնյ. Խաղաղութեամբ քով Քրիստոս:

Սրկ. Օրհնեա Տէր:

Քհնյ. Տէր Աստուած օրհնեսցէ զամեն. :

Դպ. Ամէն:

Սրկ. Մի' ոք յերեխայից, մի' ոք ի թերահաւատից եւ մի' ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս:

Դպ. Մարմին տէրունական եւ արիւն փրկչական կան առաջի երկնային զօրութիւնքն աներեւոյթք, երգեն եւ ասեն անհանգիստ բարբառով, սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց:

Սրկ. Մաղմոս ասացէք Տեառն Աստուածոյ մերում, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս:

(Եւ դպիրքն երգեեն զարբասացութիւն ըստ  
պատշաճի առուրելի)

Ծննդեան, Աւետեաց, Վարդավառի եւ  
Աստուածածնայ

Բազմութիւնք հրեշտակաց եւ զօրաց երկնա-  
ւորաց իջեալ ի յերկնից ընդ միածին թագաւո-  
րին։ Որք երգէին եւ ասէին, սա է Որդին Աստու-  
ծոյ, ամենեքեան ասասցուք. ուրախ լերուք եր-  
կինք եւ ցնծասցեն հիմունք աշխարհի։ Զի Աստ-  
ածն յաւիտենական ի յերկրի երեւեցաւ եւ ընդ  
մարդկան շրջեցաւ, զի կեցուսցէ զանձինս մեր։

Մեծի Հինգշարթի

Զերգս հոգեւորս։ Որ վերանստիս ի կառս հը-  
րանիւթս քառակերպեանս անճառելի բանդ Աստ-  
ւած։ Այսօր իջեալ ի յերկնայնոցն վասն քո արա-  
րածոցս, յանձն առեր բազմիլ ընդ աշակերտսն և  
եւ սերովբէքն եւ քերովբէքն վերին զօրացն սքան-  
չացեալ աղաղակէին ասելով, սուրբ, սուրբ,  
սուրբ Տէր զօրութեանց։

Յինանց եւ Խաչի

Ո՞վէ է, որպէս Տէր Աստուած մեր խաչեցաւ  
վասն մեր, թաղեցաւ եւ յարեաւ, հաւատարիմ ե-  
ղեւ յաշխարհի եւ համբարձաւ փառոք։ Եկայք ժո-  
ղովուրդք, զօրհնութիւնս ընդ հրեշտակս երգես-  
ցուք նմա ասելով։ սուրբ, սուրբ, սուրբ ես Տէր  
Աստուած մեր։

Կիւրակէի եկեղեցւոյ եւ Ծաղկազարդի

Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր Աս-  
տուած զքո սուրբ զԵկեղեցի։ Հաղարք հազարաց

Հրեշտակապետք կան առաջի քո եւ բիւրք բիւրուց  
պաշտեն դքեզ Տէր, եւ ի մարդկանէ հաճեցար ըն-  
դունիլ զօրհնութիւն ձայնիւ խորհրդականաւ.  
սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց:

### Պահոց եւ Նեցեցելոց

Վասն յիշատակի հանգուցելոցն, ընկալ հայր  
սուրբ մարդասէր զպատարագս: Եւ համարեա ըդ-  
հոգիս նոցա ի թիւ սրբոց քոց յարքայութեան եր-  
կնից: Մանաւանդ զի հաւատով մատուցուք ըդ-  
պատարագ, հաշտեսցի Աստուածութիւնդ եւ  
հանգուցէ զհոգիս նոցա:

### Մարտիրոսաց

Սրբութիւն սրբոց, մեծ եւ ահաւոր եւ զինուու-  
րութիւնք հրեշտակացն օրհնեն դքեզ եւ ասեն.  
Փառք ի բարձունս Աստուածոյ եւ յերկիր խաղա-  
ղութիւն:

### Մարգարեից, Առաժելոց եւ Հայրապետաց

Ամենակալ ես Տէր զօրութեանց, որ թագա-  
ւորդ ես յաւիտենից: Որ նստիս յերկնից ի յեր-  
կինս եւ լոյս ծագես յարարածս քո: Որ խոնար-  
հութեամբ իջեր ի յերկիր, քեզ պատարագս մա-  
տուցանեմք եւ սուրբ զանունդ քո փառաւորեմք  
Տէր, որ պսակիչդ ես քոց սրբոց (այս անուն),  
վասն զի սոքա են մեզ բարեխօս, Տէր ամենակալ,  
ի քում յարքայութեանդ:

Սրկ. Համբարձէք իշխանք զգրունս ձեր ի  
վեր, համբարձին դրունք յաւիտենից, եւ մտցէ  
թագաւոր փառաց:

Քհեյ. Ո՞վ է սա թագաւոր փառաց, տէր հզօր

զօրութեամբ իւրով, տէր կարող ի պատերազմի:

Սրկ. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, համբարձին դրունք յաւիտենից եւ մտցէ թագաւոր փառաց:

Քհնյ. Ո՞վ է սա թագաւոր փառաց տէր զօրութեանց:

Սրկ. Սա ինքն է թագաւոր փառաց:

Քհնյ. Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՃէր աղաչ:

Դպ. Տէր ողորմեա՛:

Սրկ. Եւ եւս հաւատով եւ սրբութեամբ կաց-  
ցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ  
ահիւ: Մի' խղճիւ եւ գայթակցութեամբ, մի'  
նենգութեամբ, խորանակութեամբ, մի' պատ-  
րանօք եւ խարէութեամբ: Մի' երկմտութեամբ եւ  
թերահաւատութեամբ. այլ ուղիղ վարուք պարզ  
մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով,  
լցեալ սիրով, լի եւ առաւելեալ ամենայն գոր-  
ծովք բարութեան: Կացցուք յաղօթս առաջի սրբ-  
ոյ սեղանոյս Աստուծոյ. եւ գտցուք զողորմու-  
թեան զշնորհս: Յաւուր յայտնութեան եւ ի միւս  
անգամ գալստեան՝ Տեառն մերոյ եւ փրկչին Յի-  
սուսի Քրիստոսի, կեցուցէ եւ ողորմեսցի:

Դպ. Կեցո՛ Տէր, եւ ողորմեա՛:

Սրկ. Օրհնեա՛ Տէր:

Քհնյ. Շնորհօք եւ մարդ. : Խաղաղութիւն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպ. Առաջի քո Տէր:

Սրկ. Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբ-  
ութեան եւ որք ոչ էք կարողք հաղորդիւ աստ-

ւածային խորհրդոյս, առ դրունս ելէք եւ ազօթեացէք:

Դպ. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ ինն Աստուած աստ բազմեցաւ:

Խաղաղութեան ձայն հնչեցաւ, սուրբ ողջունի Հրաման տուաւ:

Եկեղեցիս մի անձ եղեւ համբոյրս քո լրման տուաւ:

Թշնամութիւնն հեռացաւ, սէրն յընդհանուրս սփոնեցաւ:

Սրդ՝ պաշտօնեայք, բարձրեալ զձայն տուք օրհնութիւն ի մի բերան, միասնական Աստուածութեանն, որում Սերովրէքն են սրբաբան:

Ոմանի եւ զայս ասեն ի հանդիսի տօնի

Սրկ. Որք հաւատով կայք յանդիման, սուրբ Սեղանւոյս արքայական, տեսէք բազմեալ զՔրիստոս արքայն եւ շուրջ պատեալ զօրք վերնական:

Դպ. Վեր համբառնամք զաչս ունելով, եւ պաղատիմք զայս ասելով, զմեղս մեր մի՛ յիշեսցես, այլ գթութեամբ քո քաւեսցես, ընդ հրեշտակաց օրհնեն զքեզ եւ ընդ սրբոց քոց լեր փառք քեզ:

Մրկ. Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք, եւ նայեցարուք զդուշութեամբ:

Դպ. Առ քեզ, Աստուած:

Սրկ. Պատարագ Քրիստոս մատչի անարատ գառն Աստուածոյ:

Դպ. Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:

Սրկ. Օրհնեա՛ Տէր:

Քհեյ. Շնորհք, սէր եւ աստուածային սէր:

Դպ. Ամէն, եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Զդրունս, զդրունս, ամենայն իմաստութեամբ եւ զգուշութեամբ։ Ի վեր ընծայեսցուցէք զմիտո ձեր աստուածային երկիւղիւ։

Դպ. Ունիմք առ քեզ, Տէր ամենակալ։

Սրկ. Եւ գոհացարուք զՃեառնէ բոլորով ուրտիւ։

Դպ. Արժան եւ իրաւ։

Սրկ. Օրհնեա՛ Տէր։

Քհնյ. Եւ ընդ Սերովրէսն եւ ընդ Քերովր։

(Խսկ ի հանդիսի աւուրս, զկնի Արժան եւ իրաւին զայս ասեն։)

Սրկ. Եւ զստոյդ փրկութեան՝ որ միշտ ընդ ամենայն տեղիս, գոհութիւն մատուցանեմք քեզ, Քրիստոս։

Դպ. Որով եւ զհրաշալի յարութիւնդ քո գորութիւնք։

Սրկ. Սարսին սերովրէքն։

Դպ. Դողան քերովրէքն։

Սրկ. Եւ իշխանութիւնք վերին պետութեանցըն պար առեալ քաղցր ձայնիւ եղանակեն եւ ասեն։

Դպ. Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց։ Լի են երկինք եւ երկիր փառօք քու օրհնութիւն իրարձունս. օրհնեալ, որ եկիր եւ գալոցդ ես անւամբ Տեառն, ովսաննա ի բարձունս։

Սրկ. Օրհնեա՛ Տէր։

Քհնյ. Առէ՛ք, կերէ՛ք, այս է մարմին իմ։

Դպ. Ամէն։

Սրկ. Օրհնեա՛ Տէր։

Քհնյ. Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան։

Դպ. Ամէն։ Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քուտուր ի մահ վասն մեր, պարտապան պարտեաց

մերոց, հեղմամբ արեան Նորա աղաչեմք զքեզ,  
ողորմեա' քո բանաւոր հօտի:

Մրկ. Օրհնեա' Տէր:

Քհնյ. Եւ զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմ:

Դպ. Ամենայնի օրհնեալ ես, Տէր: Օրհնեմք  
զքեզ, գովեմք զքեզ, գոհանամք զքէն, աղա-  
չեմք զքեզ, Տէր Աստուած մեր:

Մրկ. Օրհնեա' Տէր:

Քհնյ. Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Մրկ. Աստուծոյ երկրապագեսցուք:

Դպ. Առաջի քո, Տէր: Որդի Աստուծոյ, որ  
պատարագեալ Հօր ի հաշտութիւն, հաց կենաց,  
բաշխիս ի մեզ. հեղմամբ արեան քո սուրբ աղա-  
չեմք զքեզ, ողորմեա' արեամբ քով փրկեալ  
հօտի:

Մրկ. Օրհնեա' Տէր:

Քհնյ. Որպէս զի եղիցի սա ամենեցուն:

Դպ. Հոգի Աստուծոյ, որ զփառակցի Քո  
զխորհուրդ, իջեալ ի յերկնից, կատարես ի ձեռս  
մեր. հեղմամբ արեան սորա, աղաչեմք զքեզ,  
հանգո զհոգիս մեր ննջեցելոցն:

Մրկ. Օրհնեա' Տէր:

Քհնյ. Ընդ որս եւ մեզ այց արասցես:

Դպ. Յիշեա, Տէր եւ ողորմեա:

Քհնյ. Աստուածածնին սրբոյ կուսին:

Դպ. Յիշեա, Տէր եւ ողորմեա:

Մրկ. Առաքելոց սրբոց, մարգարէից, վար-  
դապետաց, մարտիրոսաց եւ ամենայն հայրապե-  
տաց սրբոց: Առաքելագործ եպիսկոպոսաց, երի-  
ցանց, ուղղափառ սարկաւագաց, եւ ամենայն

սրբոց։ Եղիշի յիշատակ ի սուրբ պատարագո աղաչեմք։

Դպ. Յիշեա, Տէր եւ ողորմեա։

Սրկ. Օրհնեալ, գովեալ եւ փառաւորեալ հըրաշալի եւ աստուածազարդ յարութեանն (կամ տէրութեանն) Քրիստոսի երկիրպագանեմք։

Դպ. Փառք յարութեան (կամ տէրութեան) քո, Տէր։

Սրկ. Առաջնորդացն մերոց եւ առաջին լուսաւորչացն՝ սրբոյ թագէոսի եւ Բարթուղիմէոսի առաքելոցն. եւ Գրիգորի Լուսաւորչին, Արիստակիսի, Վրթանէսի, Յովսկանն, Գրիգորիսի, Ներսեսի, Մահակայ, Դանիէլի եւ Խաղայ, Մեսրոպայ վարդապետին, եւ Գրիգորի Նարեկացւոյն, եւ Ներսեսի Կլայեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն, եւ Գրիգորի եւ Մովսէսի Տաթեւացեացն, եւ սրբոց Գրիգորիսեանց եւ Ներսիսեանց, Հովուաց եւ հովուապետացն եւայլն։

Դպ. Յիշեա, Տէր եւ ողորմեա։

Սրկ. Միանձնացելոց սրբոց, առաքինասէր եւ աստուածուսոյց կրօնաւորացն, Պօղոսի, Անտոնի, Պօղայ, Մակարայ, Ռնովիրիոսի, Արբայ, Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Արսէնի, Եւագրի, Պարսամայ, Յովհաննիսեանց եւ Միմէոնեանց, սրբոց Ռսկեանց եւ Սուքիասեանց եւ ամենայն սրբոց հարց եւ աշակերտելոց նոցին ընդ տիեզերս եղիցի յիշատակ ի սուրբ պատարագո աղաչեմք։

Դպ. Յիշեա, Տէր եւ ողորմեա։

Սրկ. Ընդհանուր ամենայն հաւատացելոց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց եւ ամենայն

Հափու հասակի հաւատով եւ սրբութեամբ ի  
Քրիստոս ննջեցելոց, եղիցի յիշատակ ի սուրբ  
պատարագս աղաչեմք:

Դպ. Յիշեա, Տէր եւ ողորմեա:

Սրկ. Օրհնեա' Տէր:

Քհնի. Եւ եւս առաւել զեպիսկոպոս:

Սրկ. Գոհութիւն եւ փառարանութիւն մա-  
տուցանեմք քեզ Տէր Աստուած մեր, վասն սուրբ  
Եւ անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղա-  
նոյս, զի սա մեզ ի սրբութիւն կենդանութեան  
պարգեւեսցէ: Սովաւ չնորհեա, զւէր զհաստա-  
տութիւն եւ զղձալի զիսաղաղութիւն ամենայն  
աշխարհի. սրբոյ եկեղեցւոյ եւ ամենայն ուղղա-  
փառ եպիսկոպոսաց եւ եպիսկոպոսապետին մերոյ  
եւ պատուական հայրապետին ամենայն հայոց  
տեառն (այս անուն), եւ սրբոյ Երուսաղիմայ  
պատրիարք տեառն (այս անուն), եւ Կոստանդ-  
նուպոլսոյ պատրիարք, տեառն (այս անուն), եւ  
քահանայիս որ զպատարագս մատուցանէ, եւ վա-  
սըն զօրութեանց եւ յաղթութեանց թագաւորացն  
քրիստոնէից եւ իշխանացըն բարեպաշտից: Ա-  
ղաչեսցուք եւ խնդրեսցուք եւ վասն հոգւոցն հան-  
գուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ բարու-  
նապետացն մերոց եւ շինողաց սուրբ եկեղեցւոյս,  
որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ: Ազա-  
տութիւն եղբարց մերոց գերելոց եւ չնորհ յառա-  
ջիկայ ժողովրդեանս, հանդիստ հաւատով եւ  
սրբութեամբ ի Քրիստոս կատարելոց, եղիցի յի-  
շատակ ի սուրբ պատարագս աղաչեմք:

Դպ. Բստ ամենայնի, եւ յաղագս ամենեցուն:  
Սրկ. Օրհնեա' Տէր:

Քհնեց. Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ փրկչին :

Դպ. Ամէն եւ ընդ Հոգւոյդ քում :

Սրկ. Ամէն, եւ եւս խաաղութեան զՏէր աղ :

Դպ. Տէր ողորմեա' :

Սրկ. Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք եւս առաւելապէս զՏէր աղաչեսցուք :

Դպ. Տէր, ողորմեա' :

Սրկ. Վասն մատուցեալ սուրբ եւ աստուծային անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զտէր աղաչեսցուք :

Դպ. Տէր, ողորմեա :

Սրկ. Որպէս զի տէր Աստուծ մեր, ընկալաւ զսա ի սուրբ երկնային եւ յիմանալի իւր մատուցարան, զփոխանակն առաքեսցէ առ մեզ զշընորհս եւ զպարգեւս Հոգւոյն սրբոյ զտէր աղաչես :

Դպ. Տէր, ողորմեա :

Սրկ. Ընկալ, կեցո եւ ողորմեա. եւ պահեա զմեզ տէր քոյին շնորհիւ :

Դպ. Կեցո' տէր եւ ողորմեա :

Սրկ. Զամենասրբուհի զԱստուծածինն ըդմիշտ կոյսն Մարիամ, հանդերձ ամենայն սրբովք յիշելով զտէր աղաչեսցուք :

Դպ. Յիշեա', Տէր եւ ողորմեա :

Սրկ. Եւ եւս միաբան վասն ճշմարիտ :

Դպ. Տէր ողորմեա' :

Սրկ. Զանձինս մեր եւ զմիմեանս :

Դպ. Քեզ, Տեառնդ յանձն եղիցուք :

Սրկ. Ողորմեաց մեզ, Տէր Աստուծ մեր :

Դպ. Տէր, ողորմեա', Տէր ողորմեա', Տէր ո..:

Սրկ. Օրհնեա', Տէր :

Քհնյ. Եւ տուր մեզ, եւայլն:

Դպ. Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի, զհաց մեր հանապազօրդ տուր մեզ այսօր, թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապահաց, եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա ի չարէ:

Սրկ. Օրհնեա՛ Տէր:

Քհնյ. Զի քո է արքայութիւն: Խաղաղութ..:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Աստուծոյ երկիրպագեսցուք:

Դպ. Առաջի քո տէր:

Սրկ. Օրհնեա՛, Տէր:

Քհնյ. Քրիստոսիւ Յիսուսիւ Տէրամբ:

Սրկ. Պոսխումէ:

Քհնյ. Ի սրբութիւն սրբոց:

Դպ. Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր. ամէն:

Սրկ. Օրհնեա՛, Տէր:

Քհնյ. Օրհնեալ, Հայր սուրբ Աստուած ճշշմարիտ:

Դպ. Ամէն:

Սրկ. Օրհնեա, Տէր:

Քհնյ. Օրհնեալ, Որդիդ սուրբ Աստուած ճշշմարիտ:

Դպ. Ամէն:

Քհնյ. Օրհնեալ, Հոգիդ սուրբ Աստուած ճշշմարիտ:

Դպ. Ամէն:

Սրկ. Օրհնեա՛, Տէր:

Քհեյ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ  
եւ հոգւոյն Սրբոյ:

Դպ. Ամէն: Հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հո-  
գիդ սուրբ: Օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ  
Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտե-  
նից. Ամէն:

Սրկ. Օրհնեա', Տէր:

Քհեյ. Ի սուրբ, ի սուրբ պատուական մար. :

Դպ. Տէր ողորմեա: (Զորիցս կրկնեա):

Սրկ. Տէր ողորմեա: (Զորիցս կրկնեա):

Դպ. Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշ-  
խարհիս խաղաղութիւն:

Սրկ. Եւ հիւանդաց բժշկութիւն, ազգիս Հա-  
յոց ազատութիւն:

Դպ. Տէր ողորմեա, Տէր, ողորմեա, Յիսուս  
Փրկիչ մեզ ողորմեա:

Սրկ. Սուրբ, եւ անմահ Պատարագիս Միջ-  
նորդութեամբ:

Դպ. Ընկալ, Տէր, եւ ողորմեա:

Սրկ. Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մե-  
րում, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հո-  
գեւորս: Զի սմա վայելեն սաղմոսք եւ օրհնու-  
թիւնք, ալէլուք եւ երգք հոգեւորք: Պաշտօն-  
եայք, հանդերձ երգովք սաղմոս ասացէք եւ զՏէր  
յերկինս օրհնեցէք:

Դպ. Օրհնեալ է Աստուած. Քրիստոս պատա-  
րագեալ բաշխի ի միջի մերում. ալէլուիա:

Զմարմին իւր տայ մեզ կերակուր եւ սուրբ  
զարիւն իւր ցողէ ի մեզ, Ալէլուիա:

Մատիք առ Տէր եւ առէք զլոյս, ալէլուիա:

Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է տէր, ալէ. :

Օրհնեցէք զտէր ի յերկինս, ալէլուիա:

Օրհնեցէք զնա ի բարձունս, ալէլուիա:

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա,

ալէլուիա:

Օրհնեցէք զնա, ամենայն զօրութիւնք նորա,

ալէլուիա:

Մրկ. Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք  
եւ սրբութեամբ հաղորդեցարուք:

Դպ. Աստուած մեր եւ տէր մեր, Երեւեցաւ  
մեզ, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Քհնյ. Կեցո, Տէր, զժողովուրդս քո, եւ օրհ-  
նեա զժառանգութիւնս:

Դպ. Լցաք ի բարութեանց քոց, Տէր, ճաշա-  
կելով զմարմին քո եւ զարիւն, փառք ի բարձունս  
կերակրողիդ զմեզ: Որ եւ հանապաղ կերակրեա  
զմեզ, առաքեա ի մեզ զհոգեւոր քո զօրհնութիւն,  
փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ:

Մրկ. Ամէն, եւ եւս խաղաղութիւն զՏէր աղ:

Դպ. Տէր ողորմեա:

Մրկ. Եւ եւս հաւատով ընկալեալք յաստուա-  
ծային սուրբ երկնային անմահ անարատ եւ անա-  
պական խորհրդոյս զՏեառնէ գոհացարուք:

Դպ. Գոհանամք զքէն, Տէր, որ կերակրեցեր  
զմեզ յանմահական սեղանոյ քոյ. բաշխելով  
զմարմինդ եւ զարիւնդ ի փրկութիւն աշխարհի,  
եւ կեանք անձանց մերոց:

Մրկ. Օրհնեա՛, Տէր:

Քհնյ. Որ օրհնես զայնոսիկ, ոյք օրհնեն ըզ-  
քեզ, Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի քեզ:

Դպ. Օրհնեալ է Աստուած:

Քհնյ. Կեցո, զժողովուրդս քո:

Դպ. Ամէն:

Քհնյ. Սրբեա զնոսա ոյք ողջունեցին:

Դպ. Ամէն:

Քհնյ. Զիսաղաղութիւն պարգեւեա:

Դպ. Ամէն:

Քհնյ. Զի ամենայն տուրք բարիք եւ:

Դպ. Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչեւ յաւիտեան: (Երիցս կրկնեա)

Քհնյ. Կատարումն օրինաց եւ մարգարէից:

Սրկ. Օրթի:

(Աւետարան՝ ի սկզբանէ եր Բանն)

Սրկ. Փառք քեզ, Տէր Աստուած մեր. Սուրբ Խաչիւս աղաչես:

Քհնյ. Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց:

Սրկ. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ:

Քհնյ. Օրհնեալք եղերուք ի շնորհաց սուրբ Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ. եւ Տէր եղիցի:

## ԿԱՆՈՆ ԽԱԶԱՀԱՆԳԱՄԻ

Զօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս, որ  
կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի, սա պահես-  
ցէ զմեղ յամենայն փորձութենէ:

Քանզի ի սմա բարձրացար Աստուած, եւ ի  
սմա հեղեր զպատուական սուրբ զարիւնդ, սա  
պահեսցէ զմեղ:

Եւ զքո միւսանգամ զգալուստգ նշանաւ խաչի  
քո ցուցեր աշխարհի, սա պահեսցէ:

Աստուած մարդասէր, որ զմաքսաւորն ար-  
դարացուցեր. քաւեա զիս զմեղաւորս:

Որ քղանցիւ հանդերձի քո զմերձեցեալն թ  
քեղ բժշկեցեր. քաւեա:

Որ զանազան վիրօք մեղաց հարաք հոգիս ի  
թշնամւոյն. եւ ի բազմապատիկ հիւանդութիւնս  
կարօտացաք մարդասիրիդ բառնալոյ զցաւս մեր.  
վասն որոյ բժշկեա զմեղ Քրիստոս, որպէս մար-  
դասէր:

Որ եկիր ի փրկութիւն մարդկան ծննդեամբ  
կուսին Մարիամու. եւ կենդանարար քո յարու-  
թեամբ. հրաւիրեցեր զմահացեալքս եւ յարու-  
թիւն անմահութեան, վասն որոյ աղաչանօք մօր  
քո կեցո զմեղ Փրկիչ:

Փառք Հօր եւ որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

Առ քեղ ապաւինիմք, Ամենասրբուհի. գերա-  
գոյն եւ հրաշալի եւ բաշխող բարութեանց. աղ-  
բիւր ես ծարաւեաց եւ հանդիստ աշխատելոց. եւ  
եղեր վերընկալ աստուածային բանին:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեան:

Քհնյ. Սրբեա՛, տէր, զմեղուցեալ քոց ծառա-

յից զգայարանս, եւ չնորհեա՛ տեսանել զքեզ, եւ  
լսել զհայրական զձայն, եթէ դա է որդի իմ-սի-  
րելի:

Դպ. Ամէն ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Քհնյ. Օրհնեսցի եւ սըրբեսցի ջուրս այս նշա-  
նաւ: (Երիցս կրկնեա)

Դպ. Ամէն:

Քհնյ. Օրհնութիւն եւ փառք:

Դպ. Տաճար են սուրբ հոգւոյն, կենդանի ոս-  
կերք սոցա հիւանդաց բժիշկ, աղաչեսցուք զտէր  
սոքօք խնայեա ի մեզ:

Սոքա են դեղ կենաց, պարզեւեալ մեզ ի  
Քրիստոսէ ի բժշկութիւն, պատուական սուրբ  
արեամբն իւրեանց:

Սա է կարապետ յաւուր գալստեան փրկչին,  
եւ պսակ պարծանաց հաւատացելոց եւ սովաւ  
յաղթեսցուք յանօրէն թշնամւոյն:

Մրկ. Վասն հիւանդաց:

Քհնյ. Փարատեա:

Մրկ. Սուրբ խաչիւս աղա..:

Քհնյ. Պահպանիչ:

Մրկ. Օրհնեցից:

— . —

## ԵՐԳ ԿԻՐԱԿԱՄՏԻՑ

Ալէլուիա, ալէլուիա: Լոյս զուարթ սուրբ  
փառաց անմահի, Հօր Երկնաւորի սրբոյ կենա-  
րարի Յիսուս Քրիստոս: Եկեալքս ի մտանել ա-  
րագականն. տեսաք զլոյս երեկոյիս: Օրհնեմք  
զհայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգիդ Աստուծոյ:

Եւ ամենեքեան ասեմք. ամէն : Արժանաւորեա  
զմեզ յամենայն ժամ, օրհնել ձայնիւ երգով զա-  
նուն փառաց ամենասուրբ Երրորդութեանն : Որ  
տայ զկենդանութիւն վասն որոյ եւ աշխարհա  
զքեզ փառաւորէ :

— . —

## ՇԱՐԱԿԱՆ ԿԻՐԱԿԱՄՏԻ

ԱՃ. Սուրբ ես Տէր զօրութեանց, որ բնակեա-  
լըդ ես ի յերկինս, եւ բարերանիս ի սրբոց քոց :  
Երկնային զօրութիւնք սերովրէք եւ քերովրէք և  
անդադար օրհնեն սուրբ զանունդ քո : Քահանայք  
ընդ նոսին պաշտօնեայք եւ ժողովուրդք երկրապա-  
գեսցուք տէրութեանդ քո : Լոյսդ որ յառաջ քան  
յաւիտեանս ի Հօրէ առաքեցար, եւ լուսով իմա-  
նալեաւ լցեր զարարածս . օրհնեալ ես, թագաւոր  
յաւիտենից : Որ զլոյսն ի սկզբանէ հաստատեցեր  
վերստին եւ զխաւարն անդիտութեան յարու-  
թեամբդ քո հալածեցեր, Օրհնեալ : Ուստի եւ մեք  
լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուարթնոցն, եր-  
գեսցուք ցնծութեամբ ի յարութեան երեկոյիս,  
օրհնեալ ես թագաւոր յաւիտենից : Երկնաքա-  
ղաքացին Յովհաննէս մեծ ի ծնունդս կանանց  
քարոզէր յանապատի ազդարարող բարբառովն  
զծագումն լուսոյ արեգականն արդարութեան :  
Ճշմարիտ մարդարէ եւ ձեռնադրող Որդւոյն Աս-  
տուծոյ, յառաջնթաց Կարապետ եւ պատմող աս-  
տուածային օրինացն, հարթէր ճանապարհս թա-  
գաւորին յաւիտենից : Յանօրէն գինարբուն մո-  
լեզնեալ Հերովդիադայ, ի պարզեւի մասին

խնդրէր զգլուխ մարդարէին. շիջուցանել զարուսեակն եւ զանազօտ լապտերն:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ:

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ պարզեւեա Երկրապագուացս ամենասուրբ Երրորդութեանդ, զյարութիւն յուսոյ կենացն յաւիտենից:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս:

Զհաւատացեալ ժողովուրդս սուրբ Երրորդութեանդ, եւ զապաւինեալս ի խորան փառացքոց, պահեա անխոռվ ի խաղաղութեան:

— . —

## ՊԱՇՏՕՆ ՆՆՁԵՑԵԼՈՅ ՇԱՐԱԿԱՆ

Դկ. Որ յանէից ստեղծող գոյից արարչակից Հօր բանդ Աստուած, թողութիւն չնորհեա նընջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր: Որ ի Հօրէ առաքեցար եւ մարմնացար ի սուրբ կուսէն. թողութիւն շընորհ: Որ ի խաչին անշնչացար, զմահու լուծեր զիշխանութիւն. թողու: Որ պսակիչդ ես քոց սրբոց, եւ անվախճան բարեաց բաշխող. թողութիւն չնորհ: :

Դկ. Անըսկիզբն Աստուած, սկիզբն արարչութեան, ի հողոյ ստեղծեր ըզմարդն առաջին, գործել եւ պահել յանպատում ի կեանս. իսկ ի ստրնդանել հրամանի քո, Տէր, զվճիո մահու ի վերայ եղեալ, հող էիր անդրէն եւ ի հող դարձցիս, եւ այժմ աղաչեմք զստեղծողդ ամենից, ընկալ եւ հանգո զհրաժարեալ հոգիս յեօթնաստեղեան լուսեղէն խորանս, ուր ժողովքն են սրբոցն ի խաղա-

դութեան. Հոգւով հեղութեամբ յերկնից բարութիւնսն: Ոսկի եղեալսն անպիտանացայ, գեղեցկայարմար շինուածոյս քակտումն, իմաստունս յիմարեցայ, ի յալեաց մեղաց յոր ընկղմեցայ: Եւ այժմ: Կոչողն եհաս, վերին կոչողին, կոչնատէրն ահեղ, կոչողն ահաւոր, դատաւորն անաշառ, դատաստանն արդար, հրեշտակք անողորմք դատեն զմեղաւորս. եւ այժմ աղաչեմ:

— . —

## ԵՐԳ

Փառաց ի փառս բարձրանան, աջակողմեանքըն վերանան, յորժամ լրսեն գերանական ձայն օրհնութեան ի քէն կոչման, ննջեցելոյս մեր լըսեցո զԱստուածային բառբառդ քո, դասաւորեազսա վերնոցն երգել զիառս ընդ զուարթնոցն:

Քահանայք եւ ժողովուրդք հայցեմք ի քէն Տէր բարեգութ, ընդ ննջեցեալսն հաւատով, ընկալ զմեզ նովին յուսով: յԵրուսաղէմ քաղաք վերին յորում արդարքն ժողովին, ի փառս վերերգել միշտ ընդ նոսին Երրորդութեանդ երրեակ անձին:

Ի վերին Երուսաղէմ ի բնակարանս հրեշտակաց, ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպ, ի դրախտին եղեմական պայծառացեալ արժանապէս, ողորմած Տէր ողորմեա, հոգւոցն մեր ննջեցելոց:

Ահեղ խորհուրդ քահանային, բագկատարած կայ ի բեմին, առաջի սուրբ սեղանոյն, հուր շիջանի, խաւար մերժի, տրտմեալ հոգիքն ուրախանան, զի թողութիւն մեղաց լինի, ողորմած Տէր:

## ՇԱՐԱԿԱՆՔ Ս. ԾՆՆԴԵԱՆ

— · —

### ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԾՆՆԴԵԱՆ

Դկ. Խորհուրդ մե՛ծ եւ սքանչելի՛ որ յա՛յսմ  
աւուր յայտնեցաւ.

Հովիւքն երգեն ընդ հրե՛շտա' կս, տան ա՛ւետիս  
աշխարհի՛:

Ծնաւ նոր արքա' ի Բե՛թլեհեմ քաղաքի.

Որդիք մարդկան օրհնե՛ցէ՛ք, զի վա՛սըն մեր  
մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի՛ ի խանձարուրս  
պատեցաւ.

Ոչ մեկնելով ի Հօրէ, ի սո՛ւրբ այրին բազմեցաւ:

Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծա՛պայծառ  
աւետօք.

Եւ արարածք ամենայն զգեցան Հանդերձ  
փրկութեան:

Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս Որդին  
Աստուծոյ.

Եւ հրեղինաց բազմութիւնքն, յերկնից յերկիր  
վայր իջեալ:

Այսօր հովուացն տեսեալ զարդարութեան արե-  
գակն.

Եւ ընդ հրեշտակս երդէին փառք ի բարձունս  
Աստուծոյ:

Ի Հօրէ ծագեցար լուսաւորել զարարածու.

Արդարութեան արեգական տէր փառըք քեզ:  
Ծընար ի յայրին ընծայեցար Բեթլեհեմ.

Արդարութեան արեգակն' :

Հովուաց յայտնեցար Երկրապագեալդ ի մողուցն:

Արդարութեան արեգակն' :

Եւ մեք երգեսցուք ի կուսէն մարմնացար.

Արդարութեան արեգակն' :

### ՀԱՐՑ ԾՆՆԴԵԱՆ

Գ.Ճ. Անըսկիզրն էակից բանըդ Հօր. որ էիր յառաջ քան զյաւիտեանս, եւ եկիր ի փրկութիւն ստեղծուածոց քոց, ըզքեղ օրհնեմք Աստըւած հարցն մերոց:

Ծընար ի կուսէ անճառ միութիւն. անրաժանելի եւ միշտ գոլով ոչ մեկնեցար ի հայրական ծոցոյ. ըզքեղ օրհն.

Յնձութեամբ տօնեսցուք ըզծնունդ քո սուրբ, որ յատնեցար մեզ լոյս ի լուսոյ, եւ լուսով քո լըցեր զտիեղերս. ըզքեղ օրհն.

Օրհնեցէք, ամենայն գործըք տեառն, զտէր օրհնեցէք, եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Ըզծնեալն ի սրբոյ կուսէն օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Զանճառելի ըզծնունդ Փրկչին դովեցէք եւ առաւել բարձր արարէք զնա յաւիտեան:

### Ի ԹԱՓՈՐԻՆ

Այսօր տօն է սուրբ ծննդեան. աւետիս:

Տեառն մերոյ եւ յայտնութեան. աւետիս:

Ծնաւ, երեք զանմահ արքայն. աւետիս:

Այսօր արեւն արդարութեան. աւետիս:

Երեւեցաւ ի մէջ մարդկան. աւետիս:

Այսօր սուրբ կոյսն անապական. աւետիս:

Այսօր հրեշտակք յերկնից. աւետիս:

Բնդ մեղ օրհնեն զանմահ արքայն. աւետիս:

## ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ՃՐԱԳԱԼՈՅՍԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ

*Մեծացուցէ. ԳԶ.*

Սուրբ զԱստուածածինն օրհնութեամբ մեծացուցանեմք:

Աւետաւոր հրեշտակն աւետարանէր ըղծնեալ Փրկիչն ի սրբոյ կուսէն:

Փառք Հօր: Այժմ եւ միշտ:

Ասէ ուրախ լեր բերկրեալդ քանզի Տէր տերանց է ընդ քեզ:

— · —

## ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԾՆՆԴԵԱՆ

*Մեծացուցէ ԳԶ.*

Զանձառելի լուսոյ մայր, եւ զբնակարան անսկզբնակից որդւոյն, օրհնութեամբ մեծացուցանեմք:

Զանհաս տնօրէնութեան մայր, եւ զանձնաւոր տաճար Աստուծոյ բանին, օրհնութեամբ մեծացուցանեմք:

Փառք Հօր: Այժմ եւ միշտ:

Զբոլորից փրկութեան մայր, որ զանտանելին յէից ի յարդանդի ի բարձ, զնտ ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք:

— · —

## ԵՐԳ

Ո՞վ զարմանալի, խորհուրդ այս մեծ յայտնեալ: Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ:

Կամէր մկրտիլ ի ծառայէ իւրմէ, Զառնոյր կարապետն ըզմկրտելն ի յանձն:

ԱՆ ՊՐԻՆՑ ԱՐՄԵՆՈՎՐԱՅԻ

Կուպակ

Յորդան	1	Կայութ	
Վատակ առ վ. 2		Եմեց և Բայսա - 17	
Գետ մի' 3		Ցիշասպ - 25	
Եկեղալ մկրտլ 4		Զարդարչք - 29	
Քիսուս ս. 5		Ընառնութք - 35	
Երկինք 6		Չիտ գոհութեալ 39	
Սուրբ Հօր ի 7		Կյած սահման 65	
Սուրբ Հ. 7		Ջայութք - 79	
Յայտնեալ յո. 8		9 Անցութք	
		10 Անցութք սահ 110	
Այսօր ձս 11		Խճուղ համաժայռ 110	
Ճոյական սիր 12		Խճուղ - 193	
Գետ յորդորէ		Խճուղ	
Երգէ. մեծ կ. 13		Հայոց ուսուածոյ 215	
Լուիս, ալէլու 14		Անոթք - 221	
Առաքելո.		Մրաց ի բարյա 275	
Հնչմամք ի բա 15		Անուցան - 287	
ման հրազինեւ 16		Գոհութք - 300	
Գեռ նստէին ի 17		Եպաւութք 311	
Աննիւթա 17		Ուսուածոյ 313	
Պիորս Աստու 18		Ութ Անոթք 330	
Պահաւոր եւ դ 19		Խճուղ 330	
Պեցին համագ. 19		Եպաւութք 330	
Օրհնութի 20		Ութ ողորդք	
Հոգւոյն սրբո.			
մահական բաժ 21			
յերկինս:	22		
	23		
	24		

ՄԵԾ ՊԱՀՈՑ ԵՒ ԱՐԵՒԱԳԱԼԻ  
ԵՐԳԵՑՈՆՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԿԱՐԳ

Նախ՝ Եղիցի անուն տեսոն օրհնեալ

ԵՐԳ.

Յարեւելից մինչ ի մուտս, ի հիւսիսոյ եւ ի  
հարաւոյ, ամենայն ազդ եւ ազինք, յօրհնութիւն  
նոր օրհնեցէք զարարիչն արարածոց, որ ծագեաց  
զլոյս արեգականն այսօր յաշխարհ:

Եկեղեցիք արդարոց, փառարանիչք ամենա-  
սուրբ երրորդութեանն, յառաւօտըս լուսոյ զա-  
ռաւօտ խաղաղութեան Քրիստոս գովեցէք ընդ  
հօր եւ հոգւոյն, որ ծագեաց ըզլոյս գիտութեան  
իւրոյ ի մեզ:

— . —

ՅՈՐԴՈՐԱԿ

Յարեւելից յարեւմուտս մանկունք Սիօնի,  
օրհնեցէք միշտ անդադար զծագողըն լուսոյ:

Եկեղեցիք արդարոց եւ փառարանիչք, բարե-  
բանեցէք որ ետ զիմաստըն լուսոյ:  
Քարոզ, Աղօթի եւ փոխ՝

Աղաղակեցէք առ տէր ամենայն երկիր, ծա-  
ռայեցէք տեառն ուրախութեամբ:

Մտէք առաջի նորա ցնծութեամբ եւն..:

— . —

### ԵՐԳ

Ճըգնաւորք Աստուծոյ, եւ ժառանդորդք երկնից արքայութեանն, որք վախանակեալք զանցաւորս առիք զանանցըն բարութիւնսն. բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ:

Նահատակք պանծալիք եւ սիրեցեալք ի յերկնաւոր հօրէն, որք մըկըրտեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով ի մահ խաչին. բարե. :

Մարտիրոսք ցանկալիք, եւ օթեվանք հոգւոյն ճշմարտութեան, որք յաղթեցիք հոգւով կարեաց եւ ցանկութեան. բարե. :

Գովելիք աշխարհի, եւ բաղձալիք վերնոցըն պետութեանց. որք երանութեան մասին հասիք քան զամենայն որդիս մարդկան. բարե. :

Կամաւոր պատարագք մանկունք տիօք եւ կատարեալք իմաստութեամբ. որք վոխանակ կաթին արրիք զդինին զմայլեցուցիչ. բարե. :

### ՅՈՐԴՈՐԱԿ

Ճըգնաւորք ճըշմարիտք վրկայք Քրիստոսի. բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Նահատակք կենդանիք սիրողք Քրիստոսի, որք չարչարեցայք մարմնով վասն անուանըն Տեսոն:

Մարտիրոսք ցանկալիք մարդկան ըղձալիք, հայցեցէք ի սուրբ հոգւոյն տալ մեզ ըղբարիս:

Գովելիք վերնոց դասուց, պարծանք աշխարհի. խընդընիք զխաղաղութիւն տալ եկեղեցւոյ:

Կամաւոր սուրբ պատարագք հասակաւ մանկունք. հայցեցէք լինիլ եւ մեզ՝ ձեզ պըսակակից :

Մաղթանիք, Քարոզ, Աղօթք և Փոխ՝  
Աստուած Աստուած իմ, ես առ քեզ առաւօտ  
առնեմ, ծարաւեաց առ քեզ հոգի իմ, քանիպատիկ  
եւս եւ մարմինն իմ. եւլն. :

— · —

### ԵՐԳ

Լոյս, արարիչ լուսոյ առաջին լոյս. բնակեա-  
լրդ ի լոյս յանմատոյց, Հայր երկնաւոր ի դասուց  
լուսեղինացն օրհնեալ. ի ծագել լուսոյ առաւօ-  
տուս, ծագեա ի հոգիս մեր ըզլոյս քո իմանալի:

Լոյս, ի լուսոյ ծագումն արեգակն արդար,  
անձառ ծընունդ հօր որդի. յառաջ քան զարեւ ա-  
նուն քո զովեալ բնդ հօր. ի ծա. :

Լոյս, ի հօրէ բղխումն աղբիւր բարութեան,  
հոգիդ սուրբ Աստուծոյ. մանկունք եկեղեցւոյ  
ընդ հրեշտակս զքեզ բարերանեն. ի ծա. :

Լոյս, երբեակ եւ մի անբաժանելի սուրբ եր-  
բորդութեան, զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքս  
միշտ փառաւորեմք, ի ծա. :

— · —

### ՅՈՒՐԴՈՐԱԿ

Անեղանելիդ Աստուած հայր ամենակալ. ըն-  
կալ դադաչանըս մեր քոց պաշտօնէից:

ի հօրէ ծագումն անձառ, արեգակն արդար,  
ծագեա ի յանձինըս մեր զլոյսդ ողորմութեան:

ի հօրէ բղխուեալ հոգի, աղբիւր բարութեան.  
լուսով քով լըցո ըզմեզ յայսմ առաւօտուս:  
երեք անձինք եւ մի բնութիւն, մի աստուա-

ծութիւն, զքեզ խոստովանիմք յաւէտ սուրբ Եր-  
բորդութիւն:

Մաղթանիք, Քարոզ, Աղօթք եւ Փոխ՝

Տէր հովուեսցէ զիս, եւ ինձ ինչ ոչ պակասես-  
ցի:

Ի վայրի դալարւո՞չ անդ բնակեցոյց զիս,  
եւն. :

— · —

### ԵՐԳ

Ճանապարհ, եւ ճշմարտութիւն, եւ կեանք  
Քրիստոս. առաջնորդեա հոգւոց մերոց, յերկրէ  
ելանել յերկինս:

Դուռըն կենաց մըտից Յիսուս, մոյծ եւ ըզմեզ  
առ հայր քո եւ հոգի, երգել միշտ ըզփառս:

— · —

### ՅՈՒԴՈՐԱԿ

Ճանապարհ բարի Քրիստոս եւ ճըշմարտու-  
թիւն, առաջնորդ հոգւոց մերոց յերկրէ ի յեր-  
կինս:

Դուռըն կենաց մըտից Յիսուս, Աստուած  
ճըշմարիստ, մոյծ եւ զմեզ առ հայրըդ քո, հոգ-  
ովը Սըրբով:

Մաղթանիք, Քարոզ, աղօթք եւ ապա՝

Տէր Ամենակալ, Քարոզ եւ աղօթք  
Շարական, եւ յետոյ՝ Տէր ողորմեա ողբածայն

Մաղթանիք, Քարոզ, աղօթք:

— · —

## ՇԱՐԱԿԱՆ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

— · —

ԱՃ. Որ վերօրհնիս յաթոռս քերովբէից, ի վերայ նստիլ յաւանակի հաճեցար, բարեբանեալ որ եկիրդ ի կեցուցանել:

Ուստի եւ մեք զյաղթական օրհնութեանցն զձայն մատուցանեմք քեզ թագաւոր փառաց՝ ընդ տղայսն օրհնաբանելով, բարեբանեալ որ եկիրդ ի կեցուցանել:

Ովսաննա ի բարձունս՝ ալէլուիա, բարեբանեալ եկեալ անուամբ Տեառն՝ ալէլուիա, եւ օրհնութիւն որ գալոցդ ես անուամբ Տեառն, ալէ։

Այսօր զԱնսկիզբն Բանն՝ որ յաթոռ փառաց ընդ Հօր՝ յերկրի երեւեալ տեսաք, քրօբէական ձայնիւ օրհնեսցուք, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։

Այսօր գոլով ի Բեթանիա, քո ամենազօր հըրամանաւդ, ձայնեցեր Ղազարու եւ դողացաւ մահ, դժոխսք պարտեցաւ ապականութիւն լուծաւ, կենդանաբար Քրիստոս կեցո զմեզ։ Այսօր գոլով ի Բեթանիա, զքո զաշխարհակեցոյց սուրբ զյարութիւնդ, յառաջագոյն ծանուցեր անապականաբար կոչմամբ զչորեքորեայն ի թաղմանէ, կենդանաբար՝<sup>1</sup>։ Այսօր գոլով ի Բեթանիա Երրայեցւոց մանկունքն սքանչացեալ ասէին, զՄարիամուղեղբայրն ի թաղմանէ յարուցեալ որդւոյն Մարիամու, կենդանաբար՝<sup>1</sup>։

Կենդանութեանց բաշխող Քրիստոս, ի Բեթանիա եկաւորեալ այսօր, բարեկամին Ղազարու պարզեւէ զկենդանութիւն։ Տնօրինաբար ար-

տասուելով ընդ Մարթայի եւ ընդ Մարիամու,  
ողբակցէր եւ որպէս մարդ հարցանէր ուր եղիք  
զՂազարոս։ Եւ որպէս զԱստուած բարբառով յա-  
րուցանէ ի մեռելոց զչորեքորեայն, եւ զուգըն-  
թաց ձայնիւ մեռեալն եկն արտաքս անապական։

ԳԱՆԶ

Այս խորհուրդ լցաւ, անդ գուշակեցաւ, աստ  
կատարեցաւ։

Աստուած մարդացաւ, ընդ օրինօք մտաւ,  
քահանայացաւ։

Այսօր վերացաւ, վերնատուն նստաւ, եւ զա-  
ռըն կերաւ։

Հին օրէնքն անցաւ, զի զիրն լցաւ, եւ նորս  
սկսաւ։

Տէր քոյին չնորհաւ, լուա զմեզ բաղկաւ, ար-  
բո բաժակաւ։

Ահա ազատեա զմեզ ի մեղաց, քաւիչ յանցա-  
նաց, աղաչեմք։

Լուր Տէր եւ ողորմեա։

Սիրո իմ սասանի, սարսափ զիս ունի, վասն  
Յուղայի։

Որ Տէրն ամենի, նմա առաջի, ի ծունկս ան-  
կանի։

Նա ոչ ամաչէ, եւ ոչ զարհուրի, սիրողն ար-  
ծաթի։

Նոր սեղան դնի, եւ հաց բաղարջի, և անա-  
պակ զինի։

Տէր իմ արժանի, արա զմեզ հացի, քո սուրբ-  
սեղանի։

ԱՀԱ աղատեա զմեղ ի մեղաց, քաւիչ յանցանաց, աղաչեմք:

Լուր Տէր եւ ողորմեա:

Խոնարհիլ պարտին, իւր յանցաւորին, ըստ  
օրինաց Փրկչին:

Որք որ փափաքին, ուտել զայն մարմին, ո-  
րով սրբեացին:

Թողուլ կամովին, զյանցանս ի սրտին, զեօ-  
թանասնեկին:

Խսկ որ ստամբակին, եղեալ օրինին, որ Աստ-  
ուածային:

Խսկ Աստուածային, բնաւ ոչ սահմանին, մեր  
բազմողորմին:

ԱՀԱ աղատեա զմեղ ի մեղաց, քաւիչ յանցա-  
նաց, աղաչեմք:

Լուր Տէր եւ ողորմեա:

Աստուած ամենի, Միածին Որդի, կամաւ  
Հօր հոգւոյն ճշմարտի, յերկիր խոնարհի:

Սիրով անքըննին, լոյս անմատչելին, զենջակ  
սփածեալ զի ծածկեր զմերկութիւն նախելին:

Տէրն հրեղինաց, հրանիւթից զօրաց, խոնար-  
հեալ ի ծունկս լուանայ զոտս հողեղինաց:

Նիւթական ջրով, տարրական նիւթով մեզ  
նոր պատուիրան աւանդեալ զմեղս մաքրելով:

Ասաց Պետրոսին, հաւատայ վիմին, ե՛կ զի  
լուացից զոտս քո յընթացից չարին:

Յնձասցուք հոգւով, զնոյն ճաշակելով, փառք  
Հօրն տացուք եւ հոգւոյն Միածնի մարմնով:

Խաչի քո Քրիստոս երկիրպագանեմք, եւ ըգ-  
սուրբ մատնութիւնդ քո մեծացուցանեմք, եւ ըգ-

սուրբ չարչարանսդ քո փառաւորեմք, եկայք հաւատացեալք երկիրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ, վասն զի եկն ի ձեռն Խաչին իւրոյ շնորհեաց պարզեւս աշխարհի, Սուրբ Աստըւած, Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ անմահ, որ մատնեցաթ վասն մեր ողորմեա մեզ: (Երիցս կրկնեա):

Փառք սուրբ խաչիդ Ալէլուիա, Սուրբ մատնութեանդ, Ալէլուիա, Չարչարանացդ Ալէլուիա: Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, եւ ետուր ուրախութիւն սրտից մերոց: Ի պտղոյ ցորենոյ, զինւոյ եւ ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա:

Փառք Սուրբ խաչիդ, ալէլուիա եւն. փառք եւ երկրպագութիւն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Փառք Սուրբ խաչիդ Ալէլուիա, եւն. Խաչըն կենարար որ եղեւ մեզ փրկութիւն, սովաւ ամենեքեան ըզմեզ բարեբանեմք:

Մայ Պահապահ  
Հիսոյ բարքայիւս առաջաւ Յայութիւն  
Թ թողութիւն թշոյ թրոց:  
Հիսոյ շեշտ թ ծովածոյ սոյց աշաթիւց,  
Եւ սասցութիւն կայս ասիւնու:  
Ա թիւն ի յէջ, յայութ:  
Բայց իւնց ի կու ի քահ,  
Եւ որով յաշաթիրուսցու:»  
Դայ Ես Ես այս Թիւրուս արևայթի աւճուման,  
Կայցաւի թէ ով իսէ:  
Դայց զոյ ասաց Երևու, պայդու զի շաղու:  
Եւ աս Ես ասած ամենի ամայական:

## ԱԻԱԳ ՈՒՐԲԱԹ ԵՐԵԿՈՅ

ՀԱՆԴԵՍ ԹԱՂՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ  
ՀԱՄԲԱՐՁԻ ԴԶ. ԱՏ.

Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք սուրբ  
Երրորդութեանն, լոյսն որ ընդ հօր էութեան, ի  
քահանայից դատապարտեալ եկեալ ի խաչ ելա-  
նել, անըմահ թագաւորն:

Չոր երկինք ոչ բաւէին տանել, զիայտ պա-  
տուհասի ուսով բարձեալ, եւ եկեալ ի տեղի կա-  
ռափըման, ի խաչ ելանել, անըմահ:

Հիացեալ պետութեանց երկնից, ընդ թաղու-  
մըն Տեառն ի նոր գերեզմանի, քանզի որ անմահն  
է յէութեան, վասն արարածոց փրկութեան ըգ-  
մահ ճաշակեաց, անըմահ:

— . —

## ՇԱՐԱԿԱՆ ԹԱՂՄԱՆ ԹԱՓՈՐԻՆ

ԲՃ. Պարզեւատուն ամենեցուն, այսօր խնդրի  
պարզեւ ի Պիղատոսէ, եւ արկողն ըզլոյս որպէս  
զօթոց հաւանի պատիլ ի Յովսեփիայ:

Կենդանատուն ամենեցուն այսօր, դընի ի նոր  
գերեզմանի, եւ գանձն անմահութեան կընքի մա-  
տանեաւ քահանայիցն:

Արարածոց փրկութիւն Քրիստոս այսօր, ե-  
ղաւ ի նորափոր վիմի, զոր օրհնեն զօրք երկնից  
Երգով պահպանի ի զինուորացն:

— . —

## ՇԱՐԱԿԱՆ ԽԹՄԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ

Գծ. Լուսաւորեա Երուսաղէմ զի հասեալ է լոյս քո, զարդարեա զամուրս քո, եւ փառք Տեառն ի վերայ քո ծագեսցի:

Օրհներգութեամբ սաղմոսիւք քեզ վայելէ Աստըւած օրհնութիւն ի Սիովնէ, եւ քեզ մատուցին աղօթը յԵրուսաղէմ:

Գովեա Երուսաղէմ ըզտէր, եւ օրհնեա զԱստըւած քո նոր ժողովուրդ դշխոյ դուստը Սիովնի:

— . —

## ԶԱՏԿԻ ԱՌԱԻՈՏ

### ԱԻԱԳ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Ած. Այսօր յարեաւ ի մեռելոց վեստյն անմահ եւ Երկնաւոր, քեզ աւետիս խնդութեան, հարսն ի յերկրէ եկեղեցի, օրհնեա ի ձայն ցնծութեան, զԱստուած քո Սիովն:

Այսօր անճառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց ըզմանկունը քո, լուսաւորեա Երուսաղէմ, քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս, օրհնեա'':

Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երեակ լուսովն, եւ քեզ ծագեաց լոյս զիտութեան, յարուցեալն ի մեռելոց Քրիստոս, օրհնեա'':

Այսօր զատիկ մեր զենմամբ Քրիստոսի, արացուք տօն ցնծութեամբ, նորոգեալս ի Հնութենէ մեղաց ասելով, Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքն ի գերեզմանն, ի խնկել զանապական մարմինն : Եւ գտին ըզմէմըն բարձեալ ի դրաց գերեզմանին եւ լուեալ բարբառ ի հրեշտակէն, եթէ յարեաւ Քրիստոս եւ խափանեաց ըզմահ : Եւ հանդիպեալ քո Տէր, առաքելոցն եւ տուեալ ողջոյն կենդանարար, առաքեցեր զնոսա ի փրկութիւն տիեզերաց :

Փառք յարութեան քո տէր : Պատրանօք նախաստեղծին մերկացաք ի լուսոյն, իսկ յարութեամբ միածնիդ ըզգեցաք զանմահութիւն, փառք' : Խարանօք փայտին ճաշակեցաք ըզմահ, իսկ ի փայտէն կենաց նորոգեցաք ամենեքեան, փառք' :

Ընդ կանայսն իւղաբերսն առ քեզ առաւօտեմըք կենդանիդ յաւիտենից Քրիստոս, ընկալ եւ զմերս, փոխանակ խնկոցըն զօրհնաբանութիւնս : Փոխանակ սուրբ աւետաւոր զուարթնոյն, գըթութիւն քո մեզ հանդիպեսցի յուսով գիտութեան, մըխիթարել զհոգիս եւ լուսաւորել : Ընդ նոսին աւետարանութեամբ քարոզեսցուք զքո միայն զսքանչելիսդ, որ յարեարդ ի մեռելոց ամենազօր թագաւոր անմահ :

Որ անձառ էութեամբ հօրդ ես փառակից, չարչարիլ մարմնով յանձն առեր վասըն մեր, մըշատընջենաւոր օրհնութեամբ ի հրեշտակաց օրհնեալ ես տէր : Որ էակդ ես ընդ հօր եւ սուրբ հոգւոյն, խաչեցար եւ թաղեցար կամաւ հօր վասն մեր, մշտնջենաւոր' : Որ միւսանդամ դալոց ես հայրենի փառօք, չնորհելով աստուածապէս յարու-

թիւն Տիեզերաց, յամենայն արարածոց յաւիտենից օրհնեալ ես տէր:

ԽԶ. Որ զանարատ բազուկըս քո խաչին տարածեցեր Քրիստոս Աստըւած, եւ նըշան յաղթութեան ետուր մեզ, սովաւ զկեանըս մեր պահեա: Որ զաշխարհակեցոյց բազկատարածութիւն խաչի քո Քրիստոս Աստըւած, գաւազան զօրութեան ետուր մեզ, սովաւ՝: Որ զմեռեալն ի ճաշակմանէ փայտին յանցանաց, կենաց փայտիւն կենագործեցեր, սովաւ՝:

Փառք հօր եւ որդւոյ՝: — Այսօր հրեշտակըն լուսափայլ ի յերկնից իջեալ, զարհուրեցոյց ըզպահապանսն, եւ սուրբ կանացըն քարոզէր ասելով, Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս՝: — Այսօր նոր իսրայէլ կոչեցեալք ի Քրիստոս, ազատեալք արեամբ գառինն Աստուծոյ, պարեսցուք ընդ երկնայնոցն ասելով Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

— · —

## ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ

Ա. Գովեա Երուսաղեմ գՏէր,

Յարեաւ Քրիստոս ի մեռելոց Ալէլուիա, Եկայք ժողովուրդք երգեցէք Տեառն Ալէլուիա:


Փառք հօր եւ որդւոյ՝: Այժմ եւ միշտ եւ՝:


Յարուցելոյն ի մեռելոց ալէլուիա, որ զաշխարհս լուսաւորեաց ալէլուիա:

## ՎԵՐՋ

Часы наручные	600	44
Шармажи медные	-	79
Штангельки и кольца	-	50
Шнур для	-	82
Шнур для листов персидских	-	82
" французских = шнур персидский	-	90
" шнур для	-	9
Шнур для кружев	67	8
Шнур для кружев с язычками	-	8
Шнур для кружев с язычками	-	8
Шнур для кружев с язычками	-	91
Шнур для кружев с язычками	-	5
Шнур для кружев с язычками	-	5
Шнур для кружев с язычками	-	88
Шнур для кружев с язычками (изумрудный)	-	75
Шнур для кружев с язычками	-	49
Шнур для кружев с язычками	-	45
Шнур для кружев с язычками	-	74
Шнур для кружев с язычками	-	81
Шнур для кружев с язычками	-	92
Шнур для кружев с язычками	-	5
Шнур для кружев с язычками	-	79
Шнур для кружев с язычками	-	52
Шнур для кружев с язычками	-	74
Шнур для кружев с язычками	-	61
Шнур для кружев с язычками	-	31
Шнур для кружев с язычками	-	81
Шнур для кружев с язычками	-	15
Шнур для кружев с язычками	-	50
Шнур для кружев с язычками	-	79
Шнур для кружев с язычками	-	79
"	шнур для кружев	87

№ 7	Заправка	281.6
№ 8	Заправка	2 - 20
№ 9	Форсаж — заправка бензином	87
№ 10	Марка машиниста	91
№ 11	Ремонт тормозов	82
№ 12	Ремонт фрикционов	18
№ 13	Ремонт фрикционов	46
№ 14	Ремонт фрикционов	30





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0063203

9p

A-  
18906